Նա, ով չի նորոգում և բարձրացնում նախնիների առաքինությունը՝ ամոթ ու նախատինք է իր պապերի համար և մի նոր անեծք:

Սիրաք 20:28

Եղիր ծերերի բազմության մեջ և ով իմաստուն է՝ հակվիր դեպի նա: Ցանկացիր լսել բոլոր աստվածառաք զրույցները, և թող հանճարեղ ասույթները չվրիպեն քեզանից:

Սիրաք 6:35

Գիրք Ա

Արքունության և սթափության մասին

Լեզվի մասին

Նախաբան

Աստծու շնչով գրված ամեն գիրք օգտակար է ուսուցման, հանդիմանության, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար, որպեսզի կատարյալ լինի Աստծու մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար (Բ Տիմ. 3:16):

«Հոգևոր խրատանի» մատենաշարի վրա աշխատել ենք մոտ երեք տարի՝ նպատակ ունենալով հավատացյալ ժողովրդի կյանքում նոր լիցք հաղորդել հավատքի զորացման, հույսի հաստատման և սիրո բորբոքման մեջ: Եվ մենք, մի խումբ տկար հավատացյալներով, ջանացինք, որպեսզի աստվածաշնչյան և ընդհանրական եկեղեցու հայրերի, նաև մեր հայ Առաքելական եկեղեցու և այլ քույր եկեղեցիների հայրերի և որոշ ժամանակակիցների հոգեշահ խրատները գրի առնել՝ ըստ բաժինների, որպես հիմք ունենալով Հովհան Ոսկեբերանի հետևյալ ասույթը. «Գրքասերը արդարությամբ կարող է կոչվել Քրիստոսասեր՝ ըստ Տիրոջ այն խոսքի, որ ասում է. «Ով սիրում է ինձ՝ իմ խոսքերը պահում է» (Հովհաննես 14:20):

Մշտապես ձեռքում ունենալով Սուրբ գրքերը, մարդը երբեք չի մոռանա այն սարսափելի գրքերի մասին, որոնց մասին գրված է. «Նա ատյան նստեց, և գրքերը բացվեցին» (Դանիել 7:10):

Սիրեցեք և նախանձախնդիր եղեք Սուրբ Հայրերին, նրանցից մի բաժանվեք, նրանց մասին հիշողությունը թող վառ մնա ձեր սրտերում գիշեր ու ցերեկ: Նրանց գրքերը մշտապես ունեցեք ձեր ձեռքում և կարդացեք, որպեսզի նրանցից մեծ օգուտ քաղեք»:

Մատենաշարը կոչվում է «Խրատանի ապաշխարության», որովհետև շատ են այստեղ այնպիսի խրատները, որոնք կստիպեն կարդացողին իր մեջ տեսնել բաներ, որի համար պետք է ապաշխարել: Հույս ունենք, որ բազում հավատացյալներ այստեղ կգտնեն իրենց հուզող հարցերի պատասխանները:

Ճգնավոր հայրերի խրատներից շատերը միշտ չէ, որ հասարակ հավատացյալ ժողովրդին հարիր են, բայց մենք աշխատել ենք ընտրել այնպիսիները, որոնք հենց մեզ են պետք, իսկ եթե կլինեն բաներ, որոնք մեր ուժից վեր են, պետք չէ հուսահատվել: Վերջիններս կարող են մեզ ուղղակի ոգևորել՝ հավատարիմ մնալու այն փոքրի մեջ, որ մեզ է տրված: Սուրբ հայրերն ասում են՝ եթե չճանաչես թշնամուդ, չես կարող նրա դեմ պատերազմել, այլ միշտ պարտություն պիտի կրես: Այստեղ մենք կտեսնենք աներևույթ թշնամու բազում որոգայթները և խարդավանքները, որոնք բացահայտել են սուրբ հայրերը, նաև ցույց տվել հարձակումներին դիմակայելու բազում միջոցներ: Նմանօրինակ գրքեր ընթերցողի դեմ, ըստ սուրբ հայրերի, չարը կարող է պատերազմել՝ մի մասին ջանալով գցել հուսահատության մեջ, ասելով, թե քեզ փրկություն չկա, քանի որ այստեղ տեսար բազում մեղքեր, որոնք դու գործել ես և մինչև այսօր էլ գործում ես: Սակայն հարկ է դիմակայել հուսահատության պիղծ դևի հարձակմանը՝ ասելով. «Ոչ, Տերն ում սիրում է, նրան էլ հանդիմանում է: Փառք Աստծո, այսօր Տերն իր սերը ցուցաբերեց անարժանիս հանդեպ՝ մատնացույց անելով իմ մերկությունը, և Իր անսահման Աստվածային ողորմության վրա հուսալով

պիտի ջանամ օրեցօր համբերությամբ շտկվել և քայլել նեղ և անձուկ ճանապարհով դեպի կյանքը հավիտենական: Քանի որ «Աստծու ողորմությունը կատարյալ կերպով մեծ է, քան բոլոր մեղքերը, որոնք գործում են մարդիկ: Այդ պատճառով էլ, երբ ոմանք բազում հանցանքներից բռնված, հուսահատվում և չեն բախում Աստծո ողորմության դուռը, իրենց վրա մեծ բարկություն են բարդում Ահեղ Դատաստանի օրը: Ինչպես և մեր Տերը մի ճգնավորի խրատում էր՝ ասելով. «Մեղավորները, ովքեր իմ մարդասիրությունից և քաղցրությունից հույսները կտրում են, ավելի խիստ են ինձ բարկացնում: Այդ մեղքն առավել աններելի է, քան թե նրանց գործած բոլոր չարությունները ու անօրենությունները միասին վերցրած: Որովհետև եթե մեկը վիատվում է, ակնհայտորեն արհամարհում է իմ մարդասիրությունը և անարդարացիորեն իր չարությունն ավելի մեծ է համարում, քան իմ ողորմությունն է ու բարերարությունը, որովհետև այսպիսի մեղքերով ծանրաբեռնված լինելով, ցավում է ոչ թե որ Աստծուն է բարկացրել, այլ միայն այն բանի համար, որ անբուժելի է համարում իրեն հասած վնասը: Որովհետև եթե իսկապես զղջար, որ ինձ բարկացրել է և արհամարհել, ուստի և իմ ողորմությանը ճշմարտապես հուսացած կլիներ և նա իսկապես այն կգտներ, քանի որ անընդգրկելի և անսահման մեծ է իմ ողորմությունը, առավել քան համայն աշխարհի բոլոր անօրենությունները» («Հայելի Վարուց»):

Մի ուրիշ մասի վրա կարող է հարձակվել հպարտության դևը, նրան հրահրելով կրկնօրինակել սուրբ հայրերի մեծ ճգնությունները, որպեսզի ուժից վեր բաներ անելով կոտրվեն հավատքի կյանքի մեջ: Այս պարագայում էլ պիտի ջանանք ընդօրինակել ոչ թե սրբերի մեծ ճգնությունները, այլ ավելի ջանանք ընդօրինակել նրանց խոնարհությունը, հեզությունը, Աստծո հանդեպ ունեցած երկյուղը և սերը, որովհետև հայրերն իսկ ասում են. «Ինչ որ ուժից վեր է, չարից է» (Հայր Պիմեն): Այսպես է ասում նաև Հովհաննես Սանդուղքը. «Զարմանալ այս սրբերի ճգնության վրա, գովելի արարք է, նախանձախնդիր լինել նրանց հանդեպ՝ փրկարար է, իսկ եթե ցանկանաս դառնալ նրանց կյանքի կրկնօրինակողը՝ արդեն անմիտ և անհնարին գործ է»: Նաև նմանօրինակ իրավիճակներից անվնաս դուրս գալու նպատակով այսպիսի խորհուրդ է տալիս Իգնատիոս եպիսկոպոսը. «Յուրաքանչյուրը հայրերից ընթերցելու համար թող ընտրի իր ապրելակերպին համապատասխան նյութ: Ճգնավորը թող միայնակեցության մասին կարդա, վանքում ապրող վանականը թող կարդա վանական միաբանությանը վերաբերող խրատներ, աշխարհում ապրող քրիստոնյաները՝ ընդհանրական քրիստոնեությանը վերաբերող սուրբ հայրերի խրատները: Յուրաքանչյուրը, ինչ կոչում էլ որ ունենա, թող քաղի հայրերից բազում խրատներ:

Ապրելակերպին համապատասխան ընթերցանությունը պարտադիր է, այլապես կլցվես թեպետ սուրբ, բայց անիրագործելի մտքերով, որոնք բորբոքում են անպտուղ գործունեություն՝ սոսկ երևակայության և ցանկությունների մեջ, իսկ քո ապրելակերպին վայել առաքինի գործերը ձեռքիցդ դուրս կսահեն: Եվ դեռ ավելին, դեռ բավական չէ, որ կդառնաս անպտուղ երազող, այլև անընդմեջ հակասության մեջ գտնվող մտքերդ սրտումդ անպայման կծնեն շփոթմունք, իսկ վարքդ կլինի անորոշ, որոնք կճնշեն և կվնասեն ոչ միայն քեզ, այլև մերձավորներիդ:

Սուրբ Գրքի և սուրբ հայրերի ոչ ճիշտ ընթերցանությունը դյուրությամբ շեղում են մարդուն փրկության ճանապարհից և գցում անանցանելի

թավուտներն ու խոր անդունդները, ինչը և շատերի հետ պատահեց»:

Եվ շարունակում է, ասելով՝ «Սուրբ հայրերի այն գրվածքները, որոնք վերաբերում են վանական կյանքին, պետք է կարդալ մեծ զգուշությամբ: Նկատված է, որ սկսնակները չեն կարողանում նման գրքերը ընդունել իրենց եղած դիրքի համեմատ, այլ անխուսափելիորեն տրվում են գրքի ընթացքին: Եթե գիրքը պատմում է մենակյացների մասին և ցույց է տալիս հոգևոր պտուղների առատությունը, որը հավաքվում է խոր անապատում, ապա սկսնակի մոտ անպայման ի հայտ է գալիս մեծագույն ցանկություն հեռանալու անապատ և տրվելու մենակյացությանը: Եթե գիրքը պատմում է հոգևոր հորը անվերապահ հնազանդության վերաբերյալ, ապա սկսնակի մեջ իսկույն ի հայտ է գալիս ծայրագույն ճգնության ցանկություն՝ անմնացորդ հնազանդության տրվելու միջոցով: Բայց Աստված մեր ժամանակների համար չի տվել նման ապրելակերպի վիճակ»:

Չարը մի մասին էլ կարող է ներշնչել, թե այս բոլորը ծայրահեղություն է և մեր ժամանակների համար ոչ պիտանի: Բայց հիշենք գրվածը. «Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան», և Նրա պատվիրաններն էլ նույնն են և անխափան, «Քանզի պիտի գա ժամանակ, երբ չպիտի անսան ողջամիտ վարդապետությանը, այլ յուրաքանչյուրն ըստ իր ցանկությունների, ուսուցանողներ պիտի հավաքի իր շուրջը՝ իր ականջներին հաճելի բաներ լսելու մարմաջով. և նրանք ականջները պիտի դարձնեն ճշմարտությունից ու պիտի մոլորվեն, գնան առասպելների հետևից» (Բ Տիմ. 4:3,4): Եվ մեր Ներսես Շնորհալի հայրապետն էլ նման պարագայի համար այսպես է գրում. «Ինչպե՞ս կարող ենք բժիշկների նմանվել՝ մոլորական վիշապի խայթոցներից հիվանդացած հոգիների համար՝ ջանալով նրանց բուժել բնական կամ անբնական ախտերից, երբ հիվանդները ոչ միայն չեն փնտրում հոգևոր բժիշկների առողջարար արվեստը, այլև հանդիմանելիս և խրատելիս՝ դառը մաղձերով ապականված, ստամոքսի ցավերից տառապողների պես դժկամում են օգտակար դեղերը խմել: Եվ ոչ միայն այս, այլև ընդդիմաբանում են, թե՝ «Բժի՛շկ, նախ ա՛նձդ բժշկիր այդպիսի ցավերից և ապա՛ միայն ինձ մոտեցիր քո հանդիմանական խոսքերով»:

Այս ամենի մեջ միայն որպես մխիթարություն ունենք (այն), որ Աստված ասում է մարգարեին. «Եթե քո խոսքը լսեն և, անզգույշ լինելով, կորստյան մատնվեն, դու քո անձը կփրկես, և իրենք պարտական կլինեն իրենց արյանը» (Եզեկ. 3:19):

Բայց ոչ ոք թող չմտածի, թե մենք, մեզ մեղքի ախտերից ազատ համարելով, բժշկական այս դեղը ձեզ ենք մատուցում որպես հիվանդների, այլ ամեն ոք թող գիտենա, որ մենք ամենքից ավելի կարիք ունենք հոգու բժշկության: Բայց եթե հիմար հիվանդը մերժում է իր առողջության դեղը, որ մատուցում է իրեն մի հիվանդ բժիշկ՝ տեսնելով նրա մարմնի ցավերը, ապա իմաստուն մարդը չի հետաքրքրվում բժշկի բնությամբ՝ առո՞ղջ է, թե՝ հիվանդ, այլ քննում է դեղի օգտակարությունը՝ առողջարա՞ր է, թե՝ վնասակար:

Արդ, դուք էլ մեր անարժանության և հոգևոր պարտականությունների թերությունների պատճառով մի՛ արհամարհեք, այլ ընդունե՛ք ձեր անձերում հոգիների օգտակար դեղը, որը ձեզ ենք մատուցում: Աղաչում եմ, ընդունեցե՛ք այն սիրով և հոժարությամբ՝ ոչ թե մեր փառքի և պատվի համար, որը ոչ ոքից չենք պահանջում, թեպետ արժանի լինեինք, այլ՝ հանուն Քրիստոսի սիրո, որ մեզ կանչեց դեպի Իր Արքայությունը և փառքը: Քանզի թեև մենք

անարժան ենք, սակայն մեր խոսքը քանի որ աստվածային է, արժանի է ընդունելու: Եվ ընդունելն ուրիշ բան չէ, եթե ոչ գործով կատարելը»:

Աստվածաշնչյան և սուրբ հայրերի խրատները նման են սառույցի վրա թափված աղի, որ ճայթճայթեցնելով փշրում և հալեցնում են սառույցը: Եվ եթե մենք էլ թույլ տանք, որ մեր հոգիների վրա այս խրատները որպես աղ թափվեն, մեր մեջ էլ նույն ճաքերը կառաջանան և մեծ ցավ կպատճառեն, բայց եթե համբերենք, ապա մեր միջի սառույցը կհալվի, և մեր սրտերը կտաքանան երկնային ջերմությամբ, իսկ եթե մերժենք, ապա կմնանք գաղջության մեջ, որի համար Տերը այսպես է ասում. «Գիտեմ քո գործերը, դու, որ ոչ սառն ես և ոչ՝ տաք, երանի, թե դու կամ սառը լինեիր և կամ՝ տաք, իսկ դու գաղջ ես՝ ոչ տաք, ոչ էլ սառը. ուստի քեզ բերանիցս փսխելու վրա եմ, քանի որ ասում ես. «Հպարտ եմ և առավել հարստացա ու ոչ մի բանի կարոտ չեմ», բայց չգիտես, թե ողորմելի ես դու, թշվառ և աղքատ, մերկ և կույր: Արդ, մի խորհուրդ տամ քեզ, առ, գնիր ինձանից կրակի բովով անցած ոսկի, որ հարստանաս, գնիր սպիտակ զգեստներ, որ հագնես, որպեսզի քո մերկության անվայելչությունը չերևա, և քո աչքերին դեղ դիր, որ տեսնես: Ում սիրում եմ ես, նրան էլ հանդիմանում եմ և խրատում: Նախանձախնդիր եղիր, ուրեմն, և ապաշխարիր: Ահավասիկ, ես դռան առաջ եմ և բախում եմ, եթե մեկն ականջ դնի իմ ձայնին և բաց անի դուռը, կմտնեմ նրա մոտ և կընթրեմ նրա հետ, և նա՝ ինձ հետ: Ով հաղթի, նրան թույլ կտամ նստելու ինձ հետ իմ աթոռին, ինչպես որ Ես հաղթեցի և նստեցի իմ Հոր աթոռին: Ով ականջ ունի՝ թող լսի, ինչ որ Հոգին ասում է» (Հայտնություն 3:15 - 22): Ուրեմն , ոչ թե խուսափենք մեզ ցավ պատճառող խրատներից, այլ ընդառաջ գնանք նրանց, և այդժամ Տիրոջ ողորմությամբ կաճենք առաջին և երկրորդ պատվիրանների մեջ, սիրելով մեր Տեր Աստծուն ամբողջ սրտով, ամբողջ մտքով, ամբողջ հոգով և ամբողջ զորությամբ, և մեր մերձավորներին էլ՝ մեր անձի պես, որով և կփառավորվի Ամենասուրբ Երրորդությունը հավիտյանս. Ամեն:

Հայր Նիկոդեմոսը հոգևոր կատարելության մասին

Իմաստության սկիզբը Տիրոջ վախն է (Առակ. 1:7):
Փորձեցե՛ք ձեր անձերը, արդյո՞ք հավատքի մեջ եք, քննեցե՛ք ձեր անձերը, չգիտե՞ք որ Հիսուս Քրիստոս ձեր մեջ է, միայն թե անպիտան չլինեք (Բ Կորնթ. 13:5):

Աստված մեզ պատվիրում է. Կատարյալ եղե՛ք, ինչպես որ ձեր Երկնավոր Հայրը կատարյալ է (Մատթ. 5:48): Նա պահանջում է քրիստոնյաներից հասնել կատարելության լրման, կատարյալ լինել բոլոր առաքինություններում: Անկասկած, ամենքս էլ ուզում ենք հասնել այդ բարձրությանը, սակայն առանց նախապես տեղեկանալու, թե ինչումն է կայանում բաղձալի կատարելությունը, հնարավոր է և շեղվել ճշմարիտ ճանապարհից, և կարծելով, թե ընթանում ես դեպի կատարելություն՝ գնալ բոլորովին հակառակ ուղղությամբ:

Նախ, պարզենք մեզ համար, որ ամենակատարյալ և վեհ գործը, որին կարող է միայն ցանկանալ և հասնել մարդ արարածը, դա Աստծո հետ

մերձենալն ու մեկ լինելն է: Ոմանց կարծիքով, քրիստոնեական կյանքի կատարելությունը կայանում է պահեցողության, հսկումների, ծնրադրումների, գետնի վրա քնելու և այլ նման մարմնավոր խստությունների մեջ: Ոմանք էլ համարում են, որ այն ձեռք է բերվում կանոնական բազում աղոթքների ամենօրյա ընթերցումով և մշտական ներկայությամբ եկեղեցական բոլոր արարողություններին: Շատերն էլ այն կարծիքին են, որ կատարելության հասնելու համար անհրաժեշտ է մտային աղոթքը, առանձնությունը, լռակյացությունը: Սակայն հիշենք, որ այս բոլոր առաքինությունները սոսկ միջոցներ և կերպեր են քրիստոնեական կատարելության հասնելու համար: Մեծ վտանգ է սպառնում նրանց, ովքեր իրենց հույսը կապում են և իրենց փրկությունը հիմնում նշված առաքինությունների արտաքին կատարման վրա, բայց իրենց սրտերը թողնում սեփական կամայականությունների և սատանայական ներգործությունների ներքո, որովհետև մարդկային ցեղի թշնամին, տեսնելով, որ նրանք շեղվել են ճշմարիտ ճանապարհից, ոչ միայն չի խանգարում շարունակել մարմնավոր ճգնությունները, այլև ամեն կերպ հորդորում է ավելի խստացնել և շատացնել դրանք՝ սնելով նրանց երևակայությունը սին պատրանքներով, թե արդեն հավասարվել են հրեշտակային դասերին կամ հափշտակվել մինչև Երրորդ Երկինք, Աստծո ներկայության մեջ: Բայց թե որքանով են նրանք հեռու կարծեցյալ կատարելությունից, հստակ երևում է իրենց կյանքից և բարքից, քանի որ սիրում են զբաղեցնել առաջին տեղերը, հարգանքի և պատվի արժանանալ, սրտնեղում են ուրիշների հաջողություններից, անգամ վարկաբեկում նրանց, մեծ եռանդով քննարկում են ուրիշների թերությունները և ասածները, իսկ սեփական բացթողումների հանդեպ կույր են:

Եթե Աստված փորձում է նեղությունների կամ հալածանքների միջոցով ուշքի բերել նրանց և խոնարհության մղել, այնժամ ի հայտ է գալիս, թե որքան խորն է հպարտությունն արմատացած նրանց սրտերում և ովքեր են նրանք իրականում: Հենվելով բարեպաշտական արտաքին դրսևորումների վրա, կարծելով, որ հասել են կատարելությանը՝ հպարտությամբ համակված սկսում են դատել ուրիշներին: Ցավոք, այլևս որևէ մեկին չի հաջողվի մարդկային ճիգերով դարձի բերել նրան, եթե ոչ Աստծո զորեղ ներգործությամբ միայն: Ավելի դյուրին դարձի կգա բացահայտ մեղսագործը, քան տեսանելի բարեմասնությունների քողի տակ թաքնվածը:

Այժմ տեսնենք, թե ինչպես են վարվում իրապես առաքինի այրերը: Նրանք պահք են պահում, որպեսզի սանձեն իրենց կրքոտ մարմինը: Հսկում են, որպեսզի պայծառացնեն մտքի աչքը, մերկ գետնի վրա են քնում, որ քնով չտարվեն, առանձնանում են և լռությամբ կապում իրենց լեզուները, որպեսզի անգամ աննշան մի բանով չվիրավորեն Ամենասուրբ Աստծուն: Աղոթք են անում, մասնակցում եկեղեցական արարողություններին և այլ բարեպաշտական գործեր կատարում, որպեսզի իրենց ուշադրությունը երբեք չշեղվի երկնավոր բաներից, կարդում են մեր Տիրոջ կյանքի և չարչարանքների մասին, որպեսզի ավելի լավ տեսնեն սեփական թշվառությունը և Աստծո անսահման բարությունը, որպեսզի հոժարությամբ հետևեն մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ հանձն առնելով Խաչի ճանապարհով ընթանալը և անձնուրացությունը, ավելի ու ավելի բորբոքվեն Աստծո սիրով և հրաժարվեն սեփական անձի հանդեպ տածած սիրուց:

(«Անտեսանելի Պատերազմ» գրքից)

Խոստովանություն

1.«Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով և քո ամբողջ հոգով և քո ամբողջ զորությամբ և քո ամբողջ մտքով» (Ղուկ. 10:27):

Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, քանզի ես չեմ սիրում իմ Տեր Աստծուն: Եթե ես Նրան սիրեի, ապա ուրախությամբ անդադար կմտածեի Նրա մասին և յուրաքանչյուր միտք ինձ մեծ երջանկություն կպատճառեր, իսկ ես՝ թշվառս, կենցաղայինի, առօրեականի մասին ավելի հաճախ ու սիրով եմ մտածում, մինչդեռ Աստծուն հիշում եմ հազվադեպ և պաղ սրտով: Եթե ես սիրեի՞ Աստծուն, ապա աղոթքի միջոցով Նրա հետ զրույցը կսներ ինձ, կզմայլեր հոգիս և կձգտեի Նրա հետ անդադար հաղորդակցության մեջ մնալ: Հակառակը, ես ոչ միայն չեմ զմայլվում աղոթքով, այլև աղոթելիս դժվարանում եմ, ծուլանում, պատրաստ եմ հաճույքով որևէ անկարևոր բանով զբաղվել, միայն թե կարճեմ կամ դադարեցնեմ աղոթքս: Ունայն զբաղմունքներում ժամանակս անցնում է աննկատ, իսկ Աստծո առջև կանգնելու յուրաքանչյուր ժամը թվում է տարի: Չէ՞ որ երբ սիրում ես որևէ մեկին, ապա ամբողջ օրվա ընթացքում հիշում ես նրան և անդադար մտածում նրա մասին: Մինչդեռ ես օրվա ընթացքում հազիվ մեկ ժամ եմ տրամադրում Աստծո մասին խորհելուն և աղոթելուն, իսկ օրվա քսաներեք ժամերը՝ ավաղ, սիրով զոհում եմ իմ ցանկալի կուռքերին: Խանդավառվում եմ և բավականություն ստանում ունայն բաների և հոգու համար ստորին առարկաների մասին զրու-ցելիս, իսկ Աստծո մասին խոսելիս գաղջ եմ, ծույլ և ձանձրալի: Երբ ակամայից ներքաշվում եմ հոգևոր զրույցների մեջ, ապա շուտով սկսում եմ զրուցել այնպիսի բաների մասին, որոնք հագուրդ են տալիս իմ ցանկություններին: Սիրում եմ հետաքրքրվել քաղաքականությամբ, նորություններով, աշխարհիկ գիտություններով (հեռուստացույցը, ռադիոն, լրագրերը մասն են կազմում իմ կենցաղի), իսկ Տիրոջ օրենքն ուսանելը, Աստծո ճանաչողությունը, աղոթքը կամ որևէ այլ հոգևոր բան ինձ չեն մտահոգում, չեն սնում իմ հոգին, և այս ամենը ոչ միայն համարում եմ անկարևոր զբաղմունք քրիստոնյայի համար, այլև կողմնակի առարկա, որով կարելի է զբաղվել ազատ ժամին: Քանի որ Աստծո Սերը ճանաչվում է պատվիրանապահությամբ. ,Եթե սիրում եք Ինձ, պահեք Իմ պատվիրանները,-ասում է մեր Տերը, իսկ ես՝ անմիտս, ոչ միայն չեմ պահում Նրա պատվիրանները, այլև չեմ մտահոգվում այդ մասին, ուստի ճշմարիտ եզրակա-ցությունն այն է, որ ես չեմ սիրում իմ Տեր Աստծուն: Սա հաստատում է նաև Բարսեղ Մեծը՝ ասելով. ,Ապացույցը, որ մարդը չի սիրում իր Աստծուն և Նրա Քրիստոսին, այն է, որ չի կատարում Նրա պատվիրանները:

2. «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Ղուկ. 10:27):

Ավա՜ղ, ես չեմ սիրում մերձավորիս, քանզի մերձավորիս համար ոչ միայն անձս, այլև պատիվս, շահս և հանգստությունս չեմ զոհում: Եթե սիրեի մերձավորիս ըստ Ավետարանի պատվերի, այսինքն՝ ինչպես ինքս ինձ, ապա նրա վշտով կվշտանայի, ուրախությամբ կուրախանայի: Հակառակը, մերձավորիս դժբախտությունների մասին սիրում եմ լսել հետաքրքրությամբ, առանց վշտանալու և անտարբեր, որ առավել մեղադրելի է, կարծես բավականություն եմ ստանում դրանից և եղբորս վատ արարքները չեմ ծածկում սիրով, այլ դատելով տարածում եմ: Եղբորս երջանկությունն ու հաջողությունը չի ուրախացնում ինձ, նույնիսկ առաջացնում է նախանձի և ատելության զգացում:

3. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, նա, ով Ինձ է հավատում, Հավիտենական Կյանք ունի» (Հովհ. 6:47):

Ես չեմ հավատում ոչ մի կրոնական բանի՝ ոչ անմահությանը, ոչ Ավետարանին: Եթե ես վստահորեն հավատայի, որ մահվանից հետո կա հավիտենական կյանք և երկրային գործերի հատուցում, ապա անդադար կմտահոգվեի այդ մասին, անմահության և ահեղ դատաստանի մասին միտքը կսարսափեցներ ինձ, և այս կյանքը կապրեի որպես պանդուխտ, որը պատրաստվում է մեկնել իր հայրենիքը: Ցավոք, ես չեմ մտահոգվում այդ մասին և այս կյանքի ավարտը համարում եմ իմ գոյության սահմանը: Գաղտնի միտք է բնակվում իմ մեջ՝ թե ո՞վ գիտի, ինչ կլինի մահից հետո, եթե ասում էլ եմ, որ հավատում եմ անմահությանը, ապա միայն մտքով, սիրտս, ավա՜ղ, այլ համոզմունք ունի, որի վառ ապացույցն է իմ կյանքը՝ մշտապես հոգալը զգայական կյանքի բարեկեցության համար:

Եթե սրտով հավատայի Ավետարանին՝ որպես Աստծո խոսքի, ապա ակնածանքով և երկյուղով կվերաբերվեի Նրան, գիշեր ու ցերեկ կուսումնասիրեի Այն, կսնվեի Նրանով, ինչպես ամենօրյա կերակրով և սիրով կկատարեի Նրա օրենքները և ոչ մի երկրավոր բան չէր կարող բաժանել ինձ Նրանից: Իսկ ես՝ հիմարս, ընթերցում կամ լսում եմ Ավետարանն առանց ուշադրության, անհրաժեշտությունից կամ հետաքրքրասիրությունից ելնելով, որպես թե սովորական ընթերցանություն, և մնում եմ անպտուղ: Ցավոք, աշխարհիկ գրականությունն ինձ ավելի հոգեհարազատ է և հաճելի:

4. «Դուք այնպես քայլեք, ինչպես վայել է այն կոչմանը, որին կոչվեցիք. կատարյալ խոնարհությամբ, հեզությամբ և համբերությամբ հանդուրժեցեք միմյանց սիրով» (Եփես. 4:12):

Ես լի եմ հպարտությամբ և անձնասիրությամբ: Այդ է ապացուցում իմ վարքը: Բարիք գործելիս ձգտում եմ ցուցադրել: Ինձ գերադասում եմ ուրիշներից, թեպետև արտաքուստ ձևանում եմ խոնարհ, բայց ներքուստ հիանում եմ ինձանով, ամեն բան վերագրում իմ կարողություններին՝ համարելով ինձ առավել ուրիշներից, ծայրահեղ դեպքում՝ նրանցից ոչ վատ, թերություններս ջանում եմ արդարացնել՝ ծածկելով անմեղության քողով, զայրանում եմ ինձ չհարգողների վրա՝ համարելով նրանց անկարող մարդկանց գնահատելու: Շնորհներով հպարտանում եմ, անհաջողություններն ընդունում որպես վիրավորանք: Ուրախանում եմ թշնամիներիս դժբախտությամբ, եթե որևէ լավ բանի եմ ձգտում, նրա տակ թաքնված է գովեստը, հոգևոր շահախնդրությունը, մխիթարվում եմ աշխարհիկ մխիթարությամբ: Մի խոսքով, ինքս ինձ անդադար պաշտում եմ որպես կուռք, որին և անդուլ ծառայում եմ՝ ամեն ինչում փնտրելով զգայական հագեցում, իմ անհագ կրքերի և ցանկությունների բավարարում:

Այս ամենից եզրակացնում եմ, որ ես հպարտ եմ, ինքնահավան, անհավատ, Աստծուն չսիրող և մերձավորին ատող: Կա՞ արդյոք ավելի մեղավոր վիճակ: Չար ոգիների վիճակն ավելի լավ է իմ վիճակից, թեև նրանք չեն սիրում Աստծուն, բայց գոնե հավատում են և դողում: Իսկ ես, ի՜նչ սարսափելի հատուցում է սպասվում ինձ իմ այս անհոգ և անմիտ կյանքի համար, որը ես գիտակցում եմ, ուստի ավելի խիստ և ծանր կլինի դատապարտությունս:

(«Օտարականի խոստովանությունը» գրքից):

Նարեկ

Բան Ը

Եվ արդ, ի՞նչ պիտի անես, անձ իմ կորուսյալ, ո՞ւր պիտի թաքնվես կամ ինչպե՞ս փրկվես կամ ինչպե՞ս դուրս գաս մեղքերի բանտից: Քանզի բազում են պարտքերդ, և անթիվ՝ հատուցումներդ, սաստիկ է կշտամբանքը, և անվախճան՝ նախատինքը, անողորմ են հրեշտակները, և անկաշառ՝ Դատավորը, հզոր է ատյանը, և բեմն՝ անաչառ, քստմնելի են սպառնալիքները, և հատուցումներն՝ անողորմ, ահարկու է հրամանը, և հանդիմանությունները՝ մերկապարանոց, հրեղեն են գետերը, և վտակները՝ անանցանելի, թանձրամած է խավարը, և մառախուղը՝ անանցանելի, կործանիչ է գուբը, և տագնապը՝ մշտնջենավոր, ամենակուլ է տարտարոսը, և սառնամանիքը՝ անզերծանելի: Եվ արդ, արդարև քեզ համար են պահվում այս բոլոր դժնդակ դառնությունները և անտանելի պատուհասների տաժանելի օթևանները, ով անարժան անձ իմ մեղավոր, չարագործ, պոռնիկ, բազմաբիծ և բովանդակ անմաքրության անդաստանի սահմանագիծ: Ահա քո գործերի արդյունքն ես ժառանգելու, շեղվածդ ճշմարտությունից և խոտորվածդ մաքրությունից, տարագրվածդ արդարությունից և պարկեշտությունից, ունայնդ հոգեպարգև հարստությունների լիությունից, որ բարերար և ամենակալ Թագավորի վրեժը շարժեցիր:

Եվ քանզի կառուցեցիր քեզ համար անելանելի արգելարան և անփախչելի որոգայթ՝ ինքդ խոստովանելով քո անբժշկելի վերքերը և անօրինակ հարվածները՝ վկայելով մահվան պարտական անձիդ անբժշկելի վնասվածքը, ով չարդ բարիների մեջ, ով դառնությունդ քաղցրությանց մեջ, ով խավարդ լուսազարմերի մեջ, ով կողոպտվածդ զարդարվածների մեջ, ով պախարակվածդ գովվածների մեջ, ով ամբարիշտդ բարեպաշտների մեջ, ով անբանդ բանականների մեջ, ով անմիտդ մտավորների մեջ, ով անհանճարդ իմաստունների մեջ, ով անմաքուրդ ընտրյալների մեջ, ով մեռյալդ ողջերի մեջ, ով պիղծդ սուրբերի մեջ, ով անառակդ պարկեշտների մեջ, ով կեղծավորդ արդարների մեջ, ով անպիտանդ պիտանիների մեջ, ով անարգդ փառավորների մեջ, ով թերիդ գերազանցությունների մեջ, ով գերիդ գերագույնների մեջ, ով նվաստագույնդ վեհերի մեջ, ով աղքատդ ունևորների մեջ, ով անարժանդ փրկվածների մեջ, ով տնանկդ բարձրերի և հոգով հարուստների մեջ և զատվածդ օրհնյալներից:

Բան (ԺԸ)

Ահա ճարակող քաղցկեղի նման հանցանքիս վերքերն անցել են բոլոր օրինակներից ու տարածվելով՝ լափել լիովին անդամներս ողջ. չիք սպեղանի, Իսրայելի պես, որ դրվի անչափ իմ խարաններին. հիմնախարսխից ազդրերիս մինչև ծայրագագաթը մարմնի շինության չկա այլևս որևէ առողջ կամ բժշկության ենթակա մի տեղ: Լսի՛ր, ողորմած, բարերար, օրհնյալ և երկայնամիտ անմահ Թագավո՛ր, վշտագնած սրտիս այս ողորմաղերս պաղատանքներին, որ անձկության մեջ ուղերձում եմ Քեզ:

Բան ԻԷ

Մեղա՜ մեծիդ բարերարությանը, անարգս մեղա՜, մեղա՜ ծագմանդ ճառագայթներին, խավարս մեղա՜, մեղա՜ շնորհներիդ անբավ

երախտիքներին, արդարև մեղա՜, մեղա՜ վերին գթառատ սիրուդ, յայտնապես մեղա՜, մեղա՜ ոչնչությունից ստեղծողիդ, ստուգապես մեղա՜, մեղա՜ գերունական ծոցիդ գգվանքներին, անբավս մեղա՜, մեղա՜ աննվազ լույսիդ վայելմանը, նենգողս մեղա՜, մեղա՜ Քո անճառ կյանքի ճաշակմանը, բազմիցս մեղա՜, մեղա՜շնորհներիդ պարգևներին, հանապազ մեղա՜, մեղա՜ գովյալ Մարմնիդ Աստծու, մահու չափ մեղա՜, մեղա՜ պաշտելի Արյանն Արարչիդ, իսկապես մեղա՜:

Ահա արդարև օրհնյալ է սրտի համար հուսադրական այս բառը՝ ՛մեղանª...

Եվ ես կամովին համբուրում եմ դարձյալ կրկնելով խոսքն այս երջանիկ, մկրտությանը հարազատ:

Մեղա՜ երախտիքներիդ մոռացությամբ, վերստին մեղա, մեղա՜ մարմնովս հոգիս սպանելով, հիմարս մեղա, մեղա՜ կյանքիդ դրժողությամբ, իսկ և իսկ մեղա, մեղա՜խոսքդ արհամարհելով,չարաչար մեղա՜, մեղա՜ ինքս իմ սատակման օրվան աճապարելով, վատթարս մեղա՜, մեղա՜ պարտականս մահվան,ձաղկելիս մեղա՜, մեղա՜ անպատկառս

Քո բարձրության (հանդեպ), տաղտկալիս մեղա՜: Կրկին ողբում է հոգիս իր վերջին ողբով,քանզի կորստյան և կործանման ինձ բերեցի, քանզի անդարձ հեռացա և որդիս թշնամի համարվեցի, երկնքի բարձունքից ընկա և վարքի փշեր դիզեցի...

Բան ԻԶ

Թաղված մեղքերի գարշելի տիղմում՝ ո՛չ մեռած եմ ես և ո՛չ կենդանի:
Ու պատժապարտի կասկածոտությամբ՝ հայացքս քեզ եմ ուղղել, բարերա՜ր,
Որպեսզի կյանքի այս անհույս վիհից դուր բերես դեպի լույսը անցկալի:

Բան ԻԷ

(ԵՎ) եթե այս մահախեղդ հեծության ցավի մեջ մարդասիրելով ժամանես ինձ մոտ, Տեր Հիսուս Քրիստոս՝ կատարելով մարգարեական Սուրբ Գրքի գրվածն իմ հանդեպ, թե (Քո) բժշկությունը դադարեցնում է մեղքերը մեծամեծ, այնժամ, ամենառատ քաղցրությամբ պատվաստվելով Քեզ, Քո լուսո կերպարանքը նկարելով հոգուս մեջ, վերստին գտնվելով, կհաստատվեմ քավված և կրկին ստեղծված՝ անմահ և անախտ կյանքի փրկությամբ.

և Քեզ Հորդ և Սուրբ Հոգուդ հետ փա՜ռք հավիտյանս: Ամեն:

ԱՐԹՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Վա՜յ ապստամբ ու պիղծ քաղաքին, հարստահարություն անող քաղաքին. խոսքը չլսեց ու **խրատը** չընդունեց: Տիրոջը չապավինեց, իր Աստծուն չմոտեցավ (Սոփ.3:1-2):*

***Խրատն** անարգողը աղքատություն և անարգություն կկրի, բայց հանդիմանություն լսողը՝ պատիվ կգտնի: ...Եթե իմաստունը խրատվի, գիտություն կստանա (Առակ. 13:24, 21:11):*

Աստվածաշնչից

Հին Ուխտից

1. Բա՛րձր կանչիր և մի խնայիր, ձայնդ փողի պես բարձրացրու և իմ ժողովրդին՝ իրենց հանցանքը՝ ... իրենց մեղքերը հայտնի՛ր (Ես. 58:1):

2. Տերն երկնքից նայեց բոլոր մարդկանց որդիներին՝ տեսնելու, թե կա՞ մի իմաստուն, որ Աստծուն փնտրի: Բոլորը խոտորվեցին, միասին անպիտան դարձան (Սաղմ.13:2-3):

3. Ինչպե՞ս դուք Ինձ թողեցիք (Երեմ. 5-19):

4. Ինչպե՞ս խամրեց ոսկին, գունաթափվեց սպիտակ արծաթը, նրանց թանկագին քարերը հալվեցին ու ցրիվ եկան իրենց ճանապարհների խաչմերուկներում: Սիոնի պատվական որդիները, ավելի պատվական, քան թանկագին քարերը, ինչպե՞ս համարվեցին խեցեղեն ամաններ (Ողբ Երեմ. 4:1-2):

5. Տե՛ր, աչքերդ հառած ճշմարտությանը, տանջեցիր նրանց, բայց նրանք չզգացին, ոչնչացրիր նրանց, բայց խրատ ընդունել չկամեցան, իրենց երեսներն ապառաժից ավելի կարծրացրին և չուզեցին դարձի գալ (Երեմ.5:3):

6. Քանի որ Իմ ժողովուրդը հիմար է (Երեմ. 4:22):

7. Վա՜յ Տիրոջ օրը ցանկացողին. ձեր ինչի՞ն է պետք Տիրոջ օրը, այն խավար է և ոչ թե լույս: Որպես թե մի մարդ փախչի առյուծից, մի արջ պատահի նրան, նա տուն փախչի, ձեռքը պատին հենի և օձը խայթի նրան: Չէ՞ որ խավար է Տիրոջ օրը և ոչ լուսավոր, աղջամղջային է, և լույսի ճաճանչ չկա նրա մեջ (Ամովս 5:18-19):

8. Մարգարեները զուր, խաբուսիկ ու աննշան տեսիլքներ տեսան քեզ համար և քեզ չհայտնեցին քո անիրավությունները, որ կարողանայիր վերադառնալ քո գերությունից, այլ քեզ տվեցին սնոտի առասպելներ (Ողբ Երեմ. 2:14):

9. Քննեցե՛ք ձեր անձերը, քննեցե՛ք, ով չամաչող ազգ... դեռ Տիրոջ սաստիկ բարկությունը ձեր վրա չեկած, Տիրոջը փնտրեցե՛ք>>> արդարություն փնտրեցե՛ք, խոնարհություն փնտրեցե՛ք: Թերևս Տիրոջ բարկության օրը ծածկվեք (Սոփ. 2:13):

10. Ահավասիկ ես դատաստան եմ տեսնելու քեզ հետ, որովհետև դու ասացիր, թե՝ չմեղանչեցի (Երեմ. 2:35):

11. Սրով պիտի վախճանվեն Իմ ժողովրդի բոլոր մեղա-

վորները, որոնք ասում էին, թե՝ ´Չարիքները չեն մոտենա մեզ, չեն հասնի մեզ վրա[a] (Ամովս 9:10):

12. Լսեցեք Տեր Աստծո խոսքը, որով ես պիտի ողբամ ձեր վրա (Ամովս 5:1):

13. Ով անմիտներ, մինչև ե՞րբ անմտություն պիտի սիրեք, մինչև ե՞րբ ծաղր անողները ծաղր անելով պիտի զվարճանան ու հիմարները գիտությունը ատեն: Իմ հանդիմանությանը դարձեք: Ահա Իմ Հոգին ձեզ վրա պիտի թափեմ, իմ խոսքերը ձեզ պիտի հասկացնեմ: Որովհետև Ես կանչեցի, և դուք չուզեցիք լսել. ձեռքս երկարեցի, ու ականջ դնող չեղավ: Ապա իմ բոլոր խրատները մերժեցիք և իմ հանդիմանությունը չուզեցիք: Ես էլ ձեր թշվառությունների վրա պիտի ծիծաղեմ ու ձեզ վրա վախ հասնելու ժամանակ ծաղր պիտի անեմ: Երբ ձեր վախը հեղեղի պես հասնի, ձեզ թշվառությունը մրրիկի պես պատի և ձեր վրա նեղություն ու տառապանք գա, այն ժամանակ Ինձ պիտի աղաղակեք ու պատասխան պիտի չտամ: Ինձ պիտի փնտրեք ու պիտի չկարողանաք գտնել. որովհետև գիտությունն ատեցին ու Տիրոջ վախը չընտրեցին: Իմ խրատները չուզեցին ու բոլոր հանդիմանություններս անարգեցին, ուրեմն նրանք իրենց ճանապարհի պտուղը պետք է ուտեն ու իրենց խորհուրդներով պիտի կշտանան, քանի որ անմիտների շեղվելը իրենց մահվան պիտի տանի և հիմարների անհոգությունը իրենց պիտի կործանի: Բայց ինձ ականջ դնողն ապահովությամբ կբնակվի ու չարիքների վախից հանդարտ կմնա (Առակ. 1:22-23):

14. Ձեզ եմ կանչում, ո՛վ մարդիկ, և իմ ձայնը դեպի մարդկանց որդիներն է: Ով անմիտներ, իմաստություն հասկացե՛ք, և ով հիմարնե՛ր, խելք հասկացե՛ք: Լսեցե՛ք, որովհետև ազնիվ բաներ եմ խոսելու, և իմ շրթունքները պիտի բանամ ուղիղ բաներով, որ իմ քիմքը ճշմարտություն է խոսելու, և իմ շուրթերի համար պիղծ է անզգամությունը: Բերանիս բոլոր խոսքերն արդարությամբ են, նրանց մեջ դարձված և ծուռ բան չկա: Նրանք ամենքն էլ ուղիղ են հասկացողին և շիտակ են գիտություն գտնողներին: Առե՛ք իմ խրատը և ոչ թե արծաթ, և գիտությունն ընտիր ոսկուց ավելի սիրեցեք (Առակ. 8:4-10):

15. Եվ այն ձեզ համար ծոպ լինի, որ դուք տեսնեք այն և Աստծո բոլոր պատվիրանները ձեր միտքը բերեք և կատարեք այն ու չհետևեք ձեր սրտերին և կատարեք Իմ բոլոր պատվիրանները և սուրբ լինեք ձեր Աստծո համար (Թվ. 15:39-41):

16. Ձեր սրտի անթլպատությունը թլպատեցեք, որովհետև գուցե ձեր չար գործերի պատճառով իմ բարկությունն իբրև հուր ելնի ու բորբոքվի, և մեկը չգտնվի, որ հանգցնի այն (Երեմ. 4:4):

17. Ետ դարձեք ձեր բոլոր չար ճանապարհներից և ձեր չար ընթացքից (Զաք. 1:4):

18. Լսեցե՛ք ինձ, դուք, որ արդարության եք հետամուտ և փնտրում եք Տիրոջը, նայեցեք այն հաստատուն վեմին, որից կերտվել եք և այն հորի փոսին, որից հանվել եք (Եսայի 51:13):

19. Մի՞թե Տիրոջ ձեռքն անկարող է փրկելու, կամ Նա ծանրացրել է Իր ականջը, որ չլսի. ոչ, ձեր մեղքերն են պատնեշ դարձել ձեր և Աստծու միջև, ձեր անօրենությունների պատճառով է Նա իր երեսը շրջել ձեզանից, որ չգթա (Եսայի 59:1-2):

20. Եվ հիմա ձեր սիրտն ու ձեր հոգին ձեր Տեր Աստծուն թող փնտրեն (Ա Մնաց. 22:19):

21. Աջ և ձախ մի՛ նայեք. Տիրոջ ասածն արե՛ք (Բ Օր 5:32):

22. Քո ամբողջ սրտով Տիրոջն ապավինիր և քո իմաստությանը մի՛ վստահիր (Առակ. 3:5):

23. Ինչպես մարդն է իր որդուն խրատում, այնպես էլ քո Տեր Աստվածը քեզ պիտի խրատի (Բ Օր. 8:3):

24. Ո՞վ պիտի բարձրանա Տիրոջ լեռը, կամ ո՞վ պետք է կանգնի Նրա սուրբ տեղը: Սուրբ ձեռքեր ունեցողը և սրտով մաքուրը, որ ստությանն անձնատուր չեղավ (Սաղմ 24:3-4):

25. Աստված մարդու հոգին չի առնում, այլ միջոցներ է ստեղծում, որպեսզի աքսորվածն իրենից աքսորված չմնա (Բ Թագ. 14:14):

26. Տիրոջն ապավինողի ուժը պիտի նորոգվի (Ես. 40:31):

27. Դուք, Տիրոջ հիշողներ, լուռ մի մնացեք ու Նրան հանգիստ մի տվեք մինչև Նա հաստատի (Ես. 62:6-7):

28. Եթե Տիրոջը դառնաս, կփրկվես (Բ Օր. 4:2):

29. Տերը ձեզ հետ է, քանի որ դուք Տիրոջ հետ եք և եթե Նրան փնտրեք, պիտի գտնեք (Բ Մնաց. 15:2):

30. Փնտրեցեք Տիրոջն ու հզորացեք, փնտրեցեք Նրա երեսն ամեն ժամ (Սաղմ.104:4):

31. Ձեզ համար արդարության սերմեր ցանեցեք և կենաց պտուղ քաղեցեք. վառեցեք ձեզ համար գիտության լույսը, փնտրեցեք Տիրոջը, մինչև որ արդարության պտուղները հասնեն ձեզ: Ինչո՞ւ եք փնտրում ամբարշտություն, փխրեցնում նրա անօրենությունները և ուտում ստության պտուղը (Օսսե 10:12-13):

32. Ես ձեզ վրա չեմ բարկանալու, քանզի Ես ողորմած եմ, - ասում է Տերը, ձեր դեմ հավիտյան ոխ չեմ պահի: Բայց դու գիտակցիր քո անօրենությունները, որովհետև դու ամբարշտացար քո Տեր Աստծո դեմ: Ինձանից հեռացած որդիներ, դարձեք Ինձ մոտ, որպեսզի Ես ձեզ տիրեմ, - ասում է Տերը (Երեմ.3:12 - 14):

33. Ինձ դարձիր, քանի որ Ես քո մեղքերը ներեցի (Երեմ. 44:22):

34. Դարձեք որդիներ, և Ես կփարատեմ ձեր ցավը (Երեմ. 3:14):

35. Քաջալերվեցեք, ով զավակներ, և ձայն տվեք Աստծուն, որպեսզի Նա, որ ձեզ գերության տարավ, հիշի ձեզ (Բարուք 4. 27):

36. Մոտեցեք Տիրոջը և լո՛ւյս առեք, և թող ձեր երեսը չամաչի (Սաղմ. 33:6):

37. Մեր Աստծու առաջ մեղք գործեցինք և մեր Տեր Աստծո ձայնը չլսեցինք (Երեմ. 3:25):

38. Եկեք Տիրոջ առջև աղոթք անելու և Զորքերի Տիրոջը փնտրելու գնանք (Զաք. 8:2):

39. Մեր ճամփաները քննենք ու փորձենք և Տիրոջը դառնանք: Մեր սրտերը մեր ձեռքերի հետ դեպի երկինք՝ Աստծուն բարձրացնենք (Ողբ Երեմ. 3:40-41):

40. Եվ ուխտ արեցին, որպեսզի իրենց հայրերի Տեր Աստծուն ամբողջ սրտով ու ամբողջ հոգով փնտրեն: Եվ ով որ Իսրայելի Տեր Աստծուն չփնտրի՝ փոքր լինի, այր թե կին, պետք է մեռցվի (Բ Մնաց. 15:12):

41. Իր ամբողջ սրտով իր Աստծուն փնտրելու ելավ և հաջողության հասավ (Բ Մնաց. 31:21):

42. Քանի որ նրանք, ովքեր քեզանից հեռանում են, կկործանվեն, բայց Աստծո մոտենալը բարի է ինձ (Սաղմ. 73:21-28):

43. Իմ օգնականն ու Փրկիչը Դու ես, ով Աստված, մի ուշացիր (Ես. 40:17):

44. Քեզ վրա թող հույս դնեն բոլոր նրանք, ովքեր գիտեն անունը Քո, քանզի Դու չես լքի նրանց, ովքեր փնտրում են Քեզ, Տեր (Սաղմ. 9:11):

45. Խրատեցիր ինձ, Տեր, ու Ես չխրատվեցի, բայց չսովորեցի ինչպես անվարժ արջառ: Դարձրու ինձ, և Ես կդառնամ, քանզի Դու իմ Տեր

Աստվածն ես: Իմ գերությունից հետո զղջացի, երբ խելքի եկա, իմ ամոթալի օրերի համար հոգոց հանեցի (Երեմ. 31:18-19):

46. Եթե անգամ թզենին իր պտուղը չտա, որթատունկը ծնունդ չունենա, ձիթենին բերք չտա,դաշտերը կերակուր չտան, հոտերը դադարեն արածելուց, և մսուրների մեջ եզներ չլինեն, ես պիտի ուրախանամ Տիրոջով, ուրախանամ իմ փրկիչ Աստծով (Ամբ. 3:17-19):

47. Պիտի օրհնեմ Տիրոջը, որ իմաստուն դարձրեց ինձ և գիշերն անգամ երիկամներս ինձ խրատում էին (Սաղմ.15:7):

48. Եվ Ամենակալ Տերն ասում է. «Նրանք Իմը կլինեն այն օրը, երբ Ես փրկություն կանեմ, կփայփայեմ նրանց, ինչպես հայրն է փայփայում իրեն բարությամբ ծառայած որդուն: Դուք կդառնաք և կտեսնեք այն տարբերությունը, որ կա արդարի ու անօրենի, Աստծուն ծառայածի և չծառայածի միջև» (Մաղաք. 3:18):

Նոր Կտակարանից

49. Ժամանակն է, որ դատաստանն Աստծո տնից սկսի (Ա Պետ 4:17):

5º. Վա՜յ ձեզ, կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ բաժակի ու պնակի դուրսը մաքրում եք, մինչ ներսից նրանք լի են ձեր գողությամբ և անժուժկալությամբ: Կույր փարիսեցի, նախ մաքրի՛ր բաժակի և պնակի ներսը, որպեսզի դուրսն էլ մաքուր լինի:

Վա՜յ ձեզ՝ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ նման եք սպիտակեցրած գերեզմանների, որոնք դրսից գեղեցիկ են երևում, մինչ ներսից լի են մեռելների ոսկորներով և ամենայն ապականությամբ: Նույնպես և դուք դրսից մարդկանց արդար եք երևում, մինչ ներսից լի եք կեղծավորությամբ (Մատթ. 23:27-28):

5¡. Եթե արդարը հազիվ է փրկվելու, ապա ամբարիշտը կամ մեղավորը էլ ո՞ւր պիտի մնան (Ա Պետ. 5:18-19):

52. Մտե՛ք նեղ դռնով: Ինչքան նեղ է դուռը և նեղվածք այն ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն: (Մատթ.7:15):

53. Բազում նեղություններ կրելով է, որ մենք պետք է մտնենք Աստծո արքայությունը (Գործք 14:2º):

54. Մենք ինչպե՞ս պետք է ազատվենք, եթե անհոգ գտնվենք այնպիսի մեծ փրկության համար, որ հռչակվեց Տիրոջ կողմից (Եբր. 2:3):

55. Ահա թե ինչու մենք պետք է ավելի ևս ուշադիր լինենք Աստծո խոսքերին, որպեսզի երբեք դրանցից չհեռանանք դեպի կորուստ (Եբր. 2:1):

56. Ուրեմն, զգույշ լինենք, որ Նրա հանգստի մեջ մտնելու խոստումից, որ տրված է մեզ, ձեզանից որևէ մեկը չզրկվի (Եբր. 4:1):

57. Ահով ու դողով ձեր անձերի փրկությունը գործեցե՛ք (Փիլիպ. 2:12):

58. Եթե Հայր եք կոչում Նրան, որ առանց աչառության դատում է յուրաքանչյուրին ըստ գործերի, ապա երկյուղո՛վ ապրեցեք այս աշխարհում ձեր պանդխտության ժամանակ: ... Արդ, մաքրեցե՛ք դուք ձեզ՝ հնազանդվելով ճշմարտությանը, առանց կեղծավորություն խառնելու եղբայրասիրության մեջ՝ մաքուր սրտով ջերմորեն սիրելով միմյանց (Ա Պետ. 2:17-22):

59. Ով որ ասում է, թե՝ ճանաչեցի Նրան, և Նրա պատվիրանները չի պահում, ստախոս է, և նրա մեջ ճշմարտություն չկա (Ա Հովհ. 2:4):

60. Չխաբվեք. Աստված չի ծաղրվում, որովհետև ինչ որ մարդս սերմանում է, նույնը և կհնձի. ով սերմանում է իր մարմնի համար, այդ մարմնից էլ կհնձի ապականություն. իսկ ով Հոգու համար է սերմանում, այդ Հոգուց էլ կհնձի հավիտենական կյանք (Գաղ. 6:6-8):

61. Ինձ այնպես է թվում, թե այս ժամանակի չարչարանքներն արժանի չեն բաղդատվելու գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեզ (Հռոմ. 8:18):

62. Զգույշ եղեք, հսկեցե՛ք ու աղոթեցե՛ք, քանի որ չգիտեք, թե ե՛րբ է ժամանակը: Արդ, արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք, թե տանտերը ե՛րբ կգա՝ երեկոյա՞ն, թե՞ կեսգիշերին, աքլորականչի՞ն, թե՞ առավոտյան դեմ: Գուցե հանկարծակի գալով՝ ձեզ քնի մեջ գտնի: Բայց ինչ-որ ձեզ եմ ասում, ամենքին եմ ասում՝ արթո՛ւն կացեք (Մարկ. 13:33-37):

63. Այս էլ իմացեք ներկա ժամանակիս մասին, որովհետև հիմա ճիշտ ժամն է, որ մենք քնից զարթնենք, քանի որ փրկությունն այժմ մեզ ավելի մոտ է, քան երբ մենք հավատացինք: Գիշերն անցավ, և ցերեկը մոտեցավ. ուրեմն դե՛ն գցենք խավարի գործերը և հագնենք լույսի զրահները. չարչարվենք առաքինությամբ, ինչպես ցերեկով (Հռոմ. 13:11-13):

64. Ինչ որ հայտնի է՝ լույս է: Դրա համար էլ ասում է.«Վե՛ր կաց դու, որ ննջում ես, կանգնի՛ր մեռելների միջից, և Քրիստոս պիտի լուսավորի քեզ»: Տեսեք, թե ինչպիսի զգուշությամբ պետք է ընթանաք. ոչ թե ինչպես անմիտներ, այլ՝ ինչպես իմաստուններ. ժամանակն օգտագործե՛ք, քանզի օրերը չար են. դրա համար անմիտ մի՛ եղեք, այլ իմացե՛ք, թե ի՛նչ է Տիրոջ կամքը (Եփես. 5:13-17):

65. Ձեզ համբերություն է պետք, որպեսզի Աստծո կամքը կատարելով հասնեք Նրա խոստումներին, քանի որ՝«Մի փոքր, շատ փոքր ժամանակ ևս, և գալու է Նա, ով պիտի գա և չպիտի ուշանա: Արդ, իմ արդարը պիտի ապրի հավատով, և եթե մեկը երկմիտ է, իմ Հոգին նրան չի հավանի»: Բայց մենք երկմտելով ոչ թե կորստյան ենք մատնվում, այլ հավատքով հասնում ենք հոգիների փրկությանը (Եբր. 10:36-39):

66. Ամեն ինչի վախճանը մոտեցել է: Զգաստացե՛ք ուրեմն և արթո՛ւն եղեք աղոթքի համար: Ամեն ինչից առաջ միմյանց նկատմամբ ամուր սեր ունեցեք, քանի որ սերը ծածկում է մեղքերի շատությունը (Ա Պետ. 4:7-8):

67. Հարգեցե՛ք բոլորին, սիրեցե՛ք եղբայրությունը, վախեցե՛ք Աստծուց, պատվեցե՛ք թագավորին (Ա Պետ. 2:17):

68. Որովհետև Աստծու կամքը ա՛յս է. որ դուք սուրբ լինեք (Ա Թեսաղ. 4:3):

69. Սուրբ եղե՛ք, որովհետև սուրբ եմ Ես (Ա Պետ. 1:16):

70. Մենք, որ մեռանք մեղքի համար, ինչպե՞ս մեղքի մեջ մնանք (Հռոմ. 6:22):

71. Որովհետև, եթե ըստ մարմնի ապրենք, կմեռնենք. իսկ եթե Հոգով մարմնի գործերը սպանենք, կապրենք. որովհետև նրանք, որ առաջնորդվում են Աստծու Հոգով, նրա՛նք են Աստծու որդիներ (Հռոմ. 8:13-14):

72. Սիրելինե՛ր, և որովհետև այս խոստումն ունենք, մաքրենք մենք մեզ մարմնի և հոգու ամեն պղծությունից, կատարյալ դարձնենք սրբությունն Աստծու երկյուղով (Բ Կորնթ. 7:1):

73. Հանեցե՛ք ձեր վրայից հին մարդուն իր գործերով և հագե՛ք նորը, այն, որ նորոգված է գիտությամբ, ըստ իր Արարչի պատկերի (Կողոս.

3:9):

74. Ուստի եթե մեկն իր անձն անարգ բաներից մաքրի՝ կլինի պատվավոր անոթ՝ սրբագործված և պիտանի իր Տիրոջը, պատրաստված ամեն բարի գործի համար (Բ Տիմ. 2:21):

75. Սիրելիներ, աղաչում եմ ձեզ իբրև պանդուխտների և օտարականների, որ հեռու մնաք մարմնավոր ցանկություններից, որոնք պայքարում են հոգու դեմ (Ա Պետ. 2:11):

76. Աղը լավ բան է, բայց եթե աղն էլ անհամանա, ինչո՞վ այն պիտի համեմվի: Ոչ հողի համար է պիտանի և ոչ էլ՝ պարարտանյութի, այլ՝ դուրս թափելու: Ով որ ականջ ունի լսելու, թող լսի (Ղուկաս 15:34-35):

77. Սակայն Տիրոջ օրը գողի պես պիտի գա: Այն ժամանակ երկինքը պիտի անցնի, չքանա շառաչյունով, և տարերքը՝ հրով կիզված, պիտի լուծվի: Եվ երկիրն ու ինչ գործեր որ կան նրա վրա, հայտնի պիտի լինեն: Եվ քանի որ այս ամենն այսպես պիտի լուծվի, ուրեմն ինչպիսի՞ մարդիկ պետք է լինեք դուք. սուրբ վարմունքով և աստվածապաշտ ընթացքով՝ սպասելով և ջանալով հասնել Տիրոջ օրվա գալստյանը, երբ հրավառ երկինքը պիտի չքանա, և տարերքը հրկիզվելով պետք է հալվի: Բայց մենք, Աստծո խոստման համաձայն, աչքներս հառած սպասում ենք նոր երկրի և նոր երկնքի, որոնցում արդարություն է բնակվում: Ուստի, սիրելիներ, ջանք թափեցեք, որ Նա գտնի ձեզ անբիծ և անարատ խաղաղության մեջ: Եվ Տիրոջ համբերությունը փրկություն սեպեցեք (Բ Պետ. 3: 10-13):

Հայրեր

1. Որպես ապացույց, որ մարդն Աստծուն և Նրա Քրիստոսին չի սիրում, այն է, որ նա չի պահում Նրա պատվիրանները (Անտոն Անապատական):

2. Քո մեղքերի համար անդադար վշտացիր, որպես թե քո տանը հանգուցյալ ունես (Անտոն Անապատական):

3. Վախեցիր Աստծո հանդեպ ունեցած սիրո սառելուց (Անտոն Անապատական):

4. Անցողիկ բաների պատճառով ետ մի կանգնիր Տիրոջից, այլ հիշիր, թե ինչ խոստացար դու այն ժամանակ, երբ դեռ բոցավառված էր քո մեջ Աստծուն հաճոյանալու ձգտման ջերմությունը (Անտոն Անապատական):

5. Օրինակ մի վերցրու նրանցից, ովքեր թույլ են քեզանից, այլ նրանցից, ովքեր կատարյալ են քեզանից (Անտոն Անապատական):

6. Թող քեզ համար որպես օրինակ լինեն նրանք, ովքեր սիրեցին Տիրոջն իրենց ամբողջ սրտով և միշտ հակված են բարի գործերի: Մի ամաչիր նրանցից խնդրել հոգևոր կյանքի ուսուցում (Անտոն Անապատական):

7. Եկեղեցում մի զբաղվիր քո մեռելի թաղմամբ, այսինքն՝ մի զբաղվիր քո կենցաղային գործերի մասին խորհելով (Անտոն Անապատական):

8. Հոգին կարող է հակառակվել մեղքին, բայց առանց Աստծո չի կարող հաղթել կամ արմատախիլ անել այն (Մակար Մեծ):

9. Մերկ ենք եկել աշխարհ, օ՜, եթե միայն այս կյանքից էլ դուրս ելնենք մեղքերից մերկացած (Բարսեղ Մեծ):

10. Տևական հիվանդությունները բժշկվում են մեծ ջանքերով միայն, հարատև ջանք գործադրելով, նույն բանը կարելի է ասել նաև մեղավոր սովորությունների համար (Բարսեղ Մեծ):

11. Պետք է ապրեք այնպես, որ անցյալը երբեք ավելի լավ չլինի ապագայից կամ ներկայից (Բարսեղ Մեծ):

12. Եթե քո մեջ կա մաքրություն, անկրքություն և օտարություն չարից, ապա անկասկած քո մեջ Աստված կա (Գրիգոր Նյուսացի):

13. Ինչպես կրակը փայտ է պահանջում, այնպես էլ Տիրոջ շնորհը՝ մեր ջանքերը, որպեսզի այն բոցավառվի (Հովհան Ոսկեբերան):

14. Բարի խրատներն ու քարոզն անօգուտ են, եթե Սուրբ Հոգին չդիպչի լսողի սրտին (Հովհան Ոսկեբերան):

15. Աստծուն այնքան չեն բարկացնում մեր կատարած մեղքերը, որքան մեր չուղղվելու ցանկությունը, վաղվան մի թող այն, վաղը երբեք վերջ չունի (Հովհան Ոսկեբերան):

16. Չկա ավելի քաղցր բան, քան Աստծո հանդեպ ունեցած տխրությունը (Հովհան Ոսկեբերան):

17. Նրանք, ովքեր արհամարհեցին դժոխքը, չեն խուսափի դժոխքից: Իսկ հիշողությունը դժոխքի մասին չի թողնի, որ մենք ընկնենք դժոխք (Հովհան Ոսկեբերան):

18. Ովքեր մեղք գործելով այստեղ չեն պատժվում ամենադժբախտ մարդիկ են (Հովհան Ոսկեբերան):

19. Եթե դու ասում ես, որ Աստված մարդասեր է և այդ պատճառով էլ չի պատժի, ուրեմն քո կարծիքով այնպես է ստացվում, որ եթե Նա պատժի՝ ուրեմն մարդասեր չէ (Հովհան Ոսկեբերան):

20. Ձեռք բեր անարատություն, որպեսզի Սուրբ Հոգին բնակվի քո մեջ (Եփրեմ Ասորի):

21. Հաճելի լինել Աստծուն՝ ահա քո երանությունը: Լինել Նրա հետ միասին՝ ահա քո կոչումը և քո գործերի սկզբունքը (Եփրեմ Ասորի):

22. Յուրաքանչյուր քայլ, որ անում ենք այս կյանքի ճանապարհին, մի քայլ է, որ մեզ մոտեցնում է մեր վերջին քայլին (Եփրեմ Ասորի):

23. Չգիտե՞ք արդյոք, որ մենք ճյուղերն ենք ճշմարիտ Որթատունկի, որը մեր Տերն է: Տեսեք, որ մեզանից որևէ մեկն անպտուղ չգտնվի: Ճշմարտության Հայրը մշակելով խաղողի այգին՝ սիրով խնամում է նրանց, ովքեր պտղաբերում են, որպեսզի էլ ավելի պտղաբեր դառնան, իսկ ով չի պտղաբերում, նրանց կտրում և դուրս է նետում այգուց, դեպի անշեջ հուրը: Ուշադիր եղեք ձեր հանդեպ, չլինի անպտուղ գտնվելով կտրվեք և կրակը գցվեք (Եփրեմ Ասորի):

24. Մեծ է մահվան ժամի երկյուղը, երբ հոգին բաժանվում է մարմնից, որովհետև այդ բաժանման ժամին հոգու առջև կանգնում են իր գործերը՝ բարի և չար, որոնք արվել են իր կողմից զորուգիշեր: Ահով նայելով իր գործերին, ասում է նրանց՝ հեռացե՛ք, թո՛ւյլ տվեք ինձ դուրս գալ: Իսկ գործերը բոլորը միասին ասում են՝ դո՛ւ ես մեզ գործել, քեզ հետ մենք կգնանք Աստծո դատաստանին (Եփրեմ Ասորի):

25. Ով հույս է դնում իր ամրության վրա՝ նա կընկնի, իսկ ով խոնարհեցնում է իրեն՝ նա կբարձրանա (Եվագր Պոնտացի):

26. Փրկության սկիզբը ինքնադիմադրումն է (Եվագր Պոնտացի):

27. Չասել ճշմարտությունը, նշանակում է ոսկին հողի մեջ թաղել (Եվագր Պոնտացի):

28. Վա՛յ այն հոգուն, որ չի ցանկանում փախչել մեղքերից (Աբբա Փաղաքիա):

29. Տիրոջ շնորհներն իրենք իրենց են գալիս, եթե նրանց տեղը՝ այսինքն սիրտը, մաքուր է ամեն տեսակի պղծություններից (Աբբա Եսայի):

30. Այնպես ապրիր, կարծես թե ապրածդ օրը վերջինն է, ու Աստծո առջև մեղք չես գործի (Աբբա Եսայի):

31. Խաչը վերցնելը բովանդակվում է ամեն տեսակի մեղքերից հրաժարվելով (Աբբա Եսայի):

32. Ինչին մոլությունը կարող է քանդել ամբողջ առաքինության շենքը (Աբբա Եսայի):

33. Ամեն առավոտ, երբ արթնանում ես քնից, խորհիր այն մասին, որ Աստծո առջև պատասխան պետք է տաս բոլոր քո արարքների համար և էլ մեղք չես գործի Նրա առջև, ու Աստծո վախը կբնակվի քո մեջ (Աբբա Եսայի):

34. Պահիր քեզ ճշմարտապես՝ ինքդ քեզ քաջալերելով և հավատալով, թե Քրիստոս մեզ համար մեռավ և հարություն առավ, որպեսզի տիրի առհասարակ ողջերին և մեռյալներին: Եվ Իր արյամբ գնեց մեզ, որպեսզի քեզ համար չապրես, այլ Նրա կատարյալ ծառան լինես: Ուրեմն որքան կարող ես, խեղդիր քո սրտի մեջ եղած անհավատությունը: Ինչպես հեզ անասունն անսխալ լսում է տիրոջը, այնպես էլ պարտավոր ես դու լինել Աստծո առաջ: Եվ որքան կարող ես, սպանի՛ր մարդկային աղտերը քո մեջ ու ամեն տեսակ հեշտություն՝ բնավ քո անձի մեջ չունենալով երկրային կամք և ցանկություն, այլ հարաժամ Աստծո հետ լինել և Նրա պատվիրանները պահել (Հայր Սրապիոն):

35. Մի կարծիր, թե առաքինություն կստանաս, եթե մարմնով և արյամբ Նրա համար չճակատամարտես: Քանզի ըստ Աստվածային Առաքյալի, պետք է մինչ ի մահ փութով հակառակվել մեղքերին (Նեղոս Սինայեցի):

36. Հեռու չէ հունձքի ժամը, մաքրենք որոմից մեր հոգու արտը (Նեղոս Սինայեցի):

37. Երբ մեկն ընկնի որևէ մեղքի մեջ և չտրտմի դրան համապատասխան, ապա նորից հեշտությամբ կընկնի նույն ցանցի մեջ (Մարկոս Ճգնավոր):

38. Ոչ ոք այնքան ողորմած ու բարի չէ, ինչպես Աստված, բայց չզղջացողին Նա չի ներում (Մարկոս Ճգնավոր):

39. Չափազանց արագահոս է մեր կյանքը, բայց նրանում կամ կորցնում կամ ձեռք են բերում Հավիտենական Կյանքը (Բարդուղիմեոս Մեծ):

40. Ներկայացրու Տիրոջը քո բնական տկարությունները՝ խոստովանելով քո անկարողությունը, և անշոշափելի կերպով կստանաս Նրանից ողջախոհություն (Հովհաննես Սանդուղք):

41. Երբ անձը, ինքն իրեն դավաճանելով կորստյան է մատնում երանելի և բաղձալի ջերմությունը, այնժամ թող քննի մանրակրկիտ ձևով, որպեսզի տեսնի, թե ինչ պատճառով զրկվեց դրանից: Եվ այդ պատճառի վերացման վրա թող կենտրոնացնի իր ամբողջ ջանքը և իր բոլոր ունակությունները, քանի որ նախկին ջերմությունը հնարավոր չէ ուրիշ կերպ հետ բերել, եթե ոչ այն դռներով, որոնցով այն դուրս է եկել (Հովհաննես Սանդուղք):

42. Ավելի լավ է վիրավորել ծնողներին, քան Տիրոջը, որովհետև Նա և՛ ստեղծել է մեզ, և՛ փրկել: Իսկ ծնողները հաճախ կորստյան և հավիտենական տանջանքների են մատնել իրենց սիրելիներին (Հովհաննես Սանդուղք):

43. Տեսել եմ ես երկու մարդու, որոնք գաղտնաբար հետևում էին վանականներին և ականջ դնում սրտից բխած նրանց զղջման հոգոցներին, բայց մեկը հետևում էր նրանց նմանվելու համար, իսկ մյուսը նրա համար, որպեսզի հարմար պահի լուտանքներ թափելով՝ հրապարակի այդ բանը և Աստծո ծառային հեռացնի բարի ջանքերից (Հովհաննես Սանդուղք):

44. Թող խիղճդ քեզ հնազանդության հայելի լինի, և դա քեզ բավական է (Հովհաննես Սանդուղք):

45. Ինչպես չի կարող սոված մարդը չհիշել հացի մասին, այնպես էլ հնարավոր չէ փրկվել առանց հիշելու դժոխքը, մահը և վերջին դատաստանը (Հովհաննես Սանդուղք):

46. Վախեցիր այն ահավոր օրից ու ժամից, երբ քեզ ոչ ոք չի կարող պաշտպանել՝ ո՛չ եղբայրդ, ո՛չ հարազատդ, ո՛չ փառքդ, ո՛չ հարստությունդ ու իշխանությունդ, այլ կլինի միայն մարդը ու իր կատարած գործերը (Հովհաննես Սանդուղք):

47. Տեր, թույլ տուր ճանաչեմ Քեզ, ճանաչեմ նաև ինձ: Քեզ ճանաչեմ՝ սիրելու համար, ինձ ճանաչեմ՝ արհամարհելու համար (Երանելի Օգոստինոս):

48. Խավարն աներևույթ է լինում լույսից և առավել ևս՝ բազում լույսից, անգիտությունն աներևույթ է լինում գիտությունից և առավել ևս՝ ավելի մեծ գիտությունից (Դիոնիսիոս Արիսպագացի):

49. Տեսե՛ք, սիրելինե՛ր, որպեսզի Նրա այսքան շատ բարեգործությունները մեզ համար դատապարտություն չդառնան, եթե մենք Իրեն արժանի եղանակով չկենցաղավարենք և համերաշխությամբ չգործենք այն, ինչը բարի և հաճելի է Իր առջև (Կղեմես Հռոմեացի):

50. Որդյակներս, աղաչում եմ ձեզ, խորհեք ձեր մեջ և շտկվեք ձեր սրտերով և մտքերով՝ Տիրոջը հաճո լինելու համար: Թեկուզ և մենք թաքնվել ենք շատ մարդկանցից և ինքներս մեզ արդար ենք համարում, բայց Աստծուց ոչինչ չես թաքցնի: Դրա համար ջանացեք ամենայն փութաջանությամբ պահպանել հոգու սրբություն և մարմնի մաքրություն: Քանի որ այսպես է ասում աստվածային առաքյալ Պողոսը. «Չգիտե՞ք, որ Աստծու տաճար եք դուք, և Աստծո Հոգին է բնակվում ձեր մեջ: Եթե մեկն Աստծո տաճարն ապականի, Աստված էլ նրան պիտի ապականի, որովհետև սուրբ է Աստծու տաճարը, որը դուք եք» (Ա Կորնթ. 3:16-17) (Նիկողայոս Սքանչելագործ):

51. Հարց. - Ներկայումս շատ են սրբերը ողջ աշխարհում, այդպես կլինի՞ արդյոք նաև աշխարհի վերջում:

Երանելին պատասխանեց. - «Որդյակ իմ, մինչ աշխարհի վերջը չեն նվազի մեր Տեր Աստծու մարգարեները, ինչպես և սատանայի ծառաները: Ընդ որում, վերջին ժամանակներս նրանք, ովքեր ճշմարտապես պետք է աշխատեն Աստծու համար, հաջողությամբ պիտի թաքնվեն մարդկանցից և նրանց միջավայրում չեն կատարելու հրաշքներ և նշաններ, ինչպես այժմ է: Այլ կգնան խոնարհությամբ տարրալուծված գործերի ճանապարհով և Երկնային Արքայության մեջ կլինեն ավելի մեծ, քան հայրերը, որոնք նշաններով են փառավորվել: Այն ժամանակ ոչ ոք մարդկանց առաջ հրաշքներ չի գործի, որոնցից

բոցավառվեն մարդիկ և մղվեն խիզախումների:

Աշխարհով մեկ քահանայության աթոռներն զբաղեցնողները պետք է անճարտար լինեն և չեն տիրապետելու առաքինություններ գործելու վարպետությանը: Այդպիսին են լինելու նաև ապագա միաբանները, որովհետև ամեն բան պիտի ստորադասվի որկրամոլությանն ու փառասիրությանը, և մարդկանց իբրև գայթակղություն պիտի հանդիսանան, քան թե օրինակ, ուստիև առաքինությունն առավել ևս պետք է արհամարհվի, արծաթսիրությունը պետք է թագավորի: Եվ վա՜յ ոսկով հարստացող միաբաններին, քանզի այդպիսիք պիտի անվանարկեն Տեր Աստծուն և պիտի չտեսնեն կենդանի Աստծո երեսը: Միաբան լինի թե աշխարհական, եթե իր ոսկին տալիս է վաշխով, եթե ետ չդառնա վաշխառությունից, պիտի նետվի տարտարոսը, քանզի աղքատներին բարեգործություն անելու միջոցով չկամեցավ ընծայաբերել իր ոսկին Աստծուն: Այդպիսով, որդյակ իմ, ինչպես մինչ այդ էի ասում, շատերը ցավագար լինելով, անտեղյակությամբ պիտի անդունդը նետվեն՝ մոլորվելով լայնարձակ ճամփաների մեջ (Բարսիլիսկոս Մեծ):

52. Մարդ չպետք է վհատվի՝ տկար եմ ասելով, որովհետև շատ անգամ հաստատուն ծառերը խորտակվում և արմատախիլ են լինում, մինչդեռ դյուրաբեկ եղեգները փոթորկի դեմ հաստատուն են մնում (Ղևոնդ Ալիշան):

53. Հոգու սիրով զորացած՝ նահատակվենք առաքինության ասպարեզի վրա (Ղևոնդ Ալիշան):

54.«Դյուրություն՝ թուլություն», այսինքն՝ դյուրին բաները մեզ թուլության են առաջնորդում (Ղևոնդ Ալիշան):

55. Որտեղ շատ ներողամտություն կա՝ առաջադիմությունը քիչ է (Ղևոնդ Ալիշան):

Մենք պիտի կարողանայինք վայելել մեծ խաղաղությունը, եթե չցանկանայինք խառնվել ուրիշների ասածներին կամ գործերին, և այն ամենին, ինչի համար պատասխանատու չենք (Թովմաս Գեմբացի):

56. Երանի՜ հոգով պարզերին, որովհետև պիտի անսպառ խաղաղություն վայելեն (Թովմաս Գեմբացի):

57. Հազվադեպ ենք հաղթահարում մեկ մոլություն: Չունենք ամեն օր առաջ ընթանալու եռանդ, և այսպես մնում ենք գաղջ և սառը (Թովմաս Գեմբացի):

58. Եթե ամեն տարի միայն մեկ մոլություն արմատախիլ անենք, շուտով կատարելության կհասնենք (Թովմաս Գեմբացի):

59. Սքեմը և հերակտրությունն այնքան օգտակար չեն, որքան կյանքը փոխելը: Ցանկություններն իսպառ մեռցնելն է կերտում ճշմարիտ կրոնավորին (Թովմաս Գեմբացի):

60. Նա, ով այլ բան է փնտրում, և ոչ թե Աստծուն ու իր հոգու փրկությունը, պիտի միայն վիշտ ու նեղություն կրի (Թովմաս Գեմբացի):

61. Երանի նրան, ով մերժում է այն ամենը, ինչը կարող է խիղճը արատավորել և ծանրացնել (Թովմաս Գեմբացի):

62. Մի վհատվիր, եղբայր, հոգևոր կյանքում առաջադիմելիս, դեռևս ժամանակ ունես:

Ինչու՞ ես վաղվան թողնում առաջադրանքներդ: Վեր կաց և անմիջապես գործի անցիր՝ ասելով գործելու ժամանակն է, պայքարելու ժամանակն է, սթափվելու ժամանակն է:

Երբ հառաչում ես, երբ տառապում ես, ուրեմն հասել է խորհելու

ժամանակը (Թովմաս Գեմբացի):

63. Աշխատիր հատկապես խուսափել թերություններից և հաղթահարել այն թերությունները, որոնք ուրիշների մեջ բոլորից շատ են քեզ տհաճություն պատճառում (Թովմաս Գեմբացի):

64. Կենդանի թե մահամերձ, մնա Հիսուսի հետ, ապավինիր Նրա հավատարմությանը, միայն Նա կարող է քեզ օգնել, երբ լքվես բոլորի կողմից: Այսպիսին է քո սիրելին, չի սիրում, երբ մեկին Իր հետ բաժնեկից ես անում: Ուզում է, որ քո սիրտը միայն Իրենը լինի, և ինչպես գահի վրա՝ ուզում է թագավորել (Թովմաս Գեմբացի):

65. Շատ են այն մարդիկ, ովքեր սիրում են Հիսուսին, քանի դեռ վշտերի մեջ են:

Շատ են այն մարդիկ, ովքեր գովում են Նրան, օրհնում են, քանի դեռ ստանում են Նրա մխիթարությունը: Բայց եթե Հիսուսը թաքնվի, որոշ ժամանակ լքի նրանց, կտրտմեն և խիստ կտրտմեն (Թովմաս Գեմբացի):

66. Ամոթ մի համարիր ուրիշներին ծառայելը և այս աշխարհում աղքատ երևալը: Հիսուս Քրիստոսի սիրո համար (Թովմաս Գեմբացի):

67. Հաճախ մենք մտածում ենք, որ սրբերի կյանքն անմատչելի և հեռու է մեզանից: Դրանով մենք սահմանափակում ենք մեզ: Մեր կեղծ խոնարհությամբ մենք համարում ենք, որ սրբությունը միայն ուրիշներին է հատուկ, մինչդեռ սրբակենցաղ կյանքը, հոգու մաքրագործումը յուրաքանչյուրիս պարտքն է (Հոգեշահ գրքերից):

68. Դե, ուրեմն, եկեք մաքրվենք, սիրելիներս, եկեք դուրս նետենք մեր սրտերից և կյանքից ամեն մեղք, ամեն աղտեղություն և անպետքություն: Եկեք խնդրենք Տիրոջը, որպեսզի Նա բաց անի և ցույց տա մեր սրտերում և մեր կյանքում այն ամենը, ինչը Նրան հաճելի չէ :

Մեր մեղքերը մատնանշելը Սուրբ Հոգու գործն է, իսկ մենք մեր կողմից պետք է Նրան տանք նման հնարավորություն և խնդրենք Տիրոջից զորություն, որպեսզի կարողանանք կարգի բերել այն ամենը, ինչ Աստված մեզ կմատնանշի: Նաև ուզում եմ ասել ձեզ, որ պետք չէ լինել խոշտանգված և ճնշված, երբ Տերը կսկսի Իր գործը և կմերկացնի այն ամենը, ինչը տրտմեցնում է Սուրբ Հոգուն, ընդհակառակը, մենք պետք է լինենք ուրախ և շնորհակալ Նրան՝ Իր ողորմության համար: Եվ այսպես, ով սրբվի, նա կդառնա աստվածահաճո անոթ, պատվի անոթ, անոթ՝ Աստծո փառքի համար: Տերն անպայման կօգտագործի այդպիսի անոթն Իր կամքի համար: Աշխարհն այսօր, հնարավոր է այնքան կարիք չունի քարոզիչների, ինչքան այն բանի, որ մեզանից յուրաքանչյուրը դառնա պիտանի անոթ՝ Աստծո ձեռքերում օգտագործման համար: Ես ուրիշ ելք չեմ տեսնում, սա է միակ փրկությունը մեզ համար, մեր ընտանիքների, մեր բարեկամների և ծանոթների, նաև մեր ազգի համար՝ այս վերջին օրերում: Օ՜, տա Աստված, որպեսզի այստեղ ձեր մեջ գտնվեն այնպիսի մարդիկ, որոնք ընդունեն այս բոլորն ամբողջ սրտով (քարոզիչ Էռլո Շտեգեն):

69. Այսպես է ասում չզղջացող մեղավորը. «Ես թեպետ Աստծո օրենքներին հակառակ ճամփաների մեջ եմ գտնվում, բայց հավատքի կողմից թերություն չունեմ. որովհետև հավատում եմ մեռելների հարությանը, Դատաստանին, Արքայությանը և Սուրբ Գրքի հայտնած բոլոր ճշմարտություններին: Գոնե անհավատության մեղք չեմ ավելացրել մյուս մեղքերիս վրա»: Դու քեզ ճշմարիտ հավատացյա՞լ ես կարծում, ո՛վ մեղավոր, բայց քո գործերը

քո մասին վկայում են, որ դու կա՛մ անհավատ ես, կամ հիմար (Տեր Գաբրիել քահանա):

70. Երբեմն մեղավորի ապահովության պատճառ է լինում իր արդարության վրա ունեցած վստահությունը: Նա իր պահքերին, ծոմերին, աղոթքներին, ողորմություններին և բարեգործություններին ապավինելով՝ հույս ունի երկինքը իբրև վարձ ընդունել՝ չգիտենալով, որ մեր անձի արդարության մասին մարգարեի բերանով Աստված այսպես ասաց. «Ձեր բոլոր արդարությունը դաշտանի լաթի պես է» (Տեր Գաբրիել քահանա):

71. Մեղավորի ապահովության պատճառներից մեկն էլ՝ հույսը միայն Աստծո վրա դնելն է, խորհելով, թե Աստված ողորմած լինելով կորստի չի մատնի իրեն, ինչպես հայրը գթած է իր զավակի հանդեպ: Բայց իմաստուն վարդապետի ասածի համեմատ. «Աստծո ողորմությունն ավելի շատ մարդ է դատապարտել դժոխքի, քան Նրա արդարությունը»: Ուզում է ասել, թե որքան բազում են նրանք, որոնք առանց իրենց անձերն ուղղելու և Աստծու կամքի համեմատ ապրելու, միայն Աստծո վրա հույս դնելով՝ կորստյան մատնվեցին: Մինչդեռ շատերն Աստծո արդարությունից վախենալով՝ փրկության արժանի եղան (Տեր Գաբրիել քահանա):

72. Չէ՞ որ Քրիստոս՝ մեր Տերը տասներկու առաքյալներին էլ հայտնեց, թե իրենց անունները երկնքում Կենաց Գրքի մեջ գրված են, և թե դատաստանի օրը տասներկու աթոռների վրա պիտի նստեն՝ Իսրայելի տասներկու ցեղերը դատելու համար: Այս խոստումն Իսկարիովտացի Հուդային էլ էր պատկանում, բայց նա չարաչար կորսվեց ու դատապարտության որդի եղավ (Տեր Գաբրիել քահանա):

73. Տերը Պողոս Առաքյալին ցույց էր տվել այնպիսի ապահով մի վիճակ՝ կոչելով նրան «Ընտրյալ անոթ», և դեռ նրա մարմնի մեջ եղած ժամանակ հափշտակեց երրորդ երկինք՝ իր վայելքների փառքի գրավականը ցույց տալով նրան, բայց ինքը՝ առաքյալը, տակավին չվստահեց այս նշաններին և մեծ երկյուղի մեջ էր իր փրկության նկատմամբ.«Անձս ճնշում եմ, որ միգուցե, երբ ուրիշներին քարոզեմ՝ ես ինքս անպիտան գտնվեմ» (Ա Կորնթ. 9:27): Այսպես իրենց անձի փրկության համար Աստծուց հայտնություն ընդունող սրբերն անգամ միշտ վախի և անվստահության մեջ լինելով, գիշեր ու ցերեկ իրենց անձի փրկության համար էին աղոթում: Իսկ ի՞նչ է նշանակում արդյոք մեր՝ այս մասին ունեցած անհոգությունն ու անտարբերությունը (Տեր Գաբրիել քահանա):

74. Սուրբ Գիրքը ամեն բանից ավելի մեր փրկության մասին նվազ ապահովության նշաններ է ցույց տալիս, ուրեմն՝ ամեն բանից ավելի սրա վրա մտածելու և հոգ անելու պատճառներ ունենք: Դժոխքն ու հավիտենականությունը այնպիսի վիճակ ունեն, որ եթե Աստված հրեշտակի կամ մի որևէ մարգարեի բերանով հայտնած լիներ, թե աշխարհի հազար միլիոն մարդկանց միջից միայն մի մարդ այնտեղ պիտի գնա ու դատապարտվի, դարձյալ մեր համար մեծ հոգս ու ցավ անելու պատճառ է այս, որ մի գուցե ես լինեմ այն մեկ հատիկ դատապարտելին: Բայց եթե ասված լիներ, թե այսքան բազմության միջից երկու կամ երեք մարդ պիտի դատապարտվեն, այս դատապարտյալների թվի համեմատ, իհարկե, ավելի մեծ պիտի լիներ մեր ցավն ու հոգսը: Բայց ի՞նչ ասեմ, երկու կամ երեք կամ չորս, հարյուր, հազար, տաս հազար, հարյուր հազար, միլիոն, թերևս մարդկանց բազմության կեսը կամ կեսից ավելին. ո՛չ, տակավին ավելի կարող ես առաջ գնալ: Այս ահռելի

ճշմարտությունը հաստատեց մեր Տիրոջ անսուտ բերանը.«Կանչվածները շատ են, բայց ընտրվածները քիչ» (Տեր Գաբրիել քահանա):

75. Բայց որովհետև մարդը մե՛կ անգամ պիտ մեռնի, մե՛կ անգամ դատվի, մե՛կ անգամ դատապարտվի և է՛լ փրկության հնար բնավ պիտի չլինի, և էլ չի լինի ճար ու ճարակ, և չի լինի վախճան տանջանքի. «Քանզի կրակը չի մարի, և որդը չի մեռնի». ուստի որչափ խրատեմ քեզ՝ քիչ է դարձյալ, և դու էլ քո կողմից որչափ զգուշություն անես՝ քիչ է դարձյալ: Դառնանք, ուրեմն, բոլոր սրտով առ Աստված, քանի որ Նա տակավին ողորմության և ոչ թե արդարության աթոռի վրա է նստած, որովհետև մեր դարձը հիմա ընդունելի կարող է լինել (Տեր Գաբրիել քահանա):

76. Հոժարությամբ ընտրենք խաչը. զորանանք փորձության դեմ և հաղթենք նրանց՝ Աստծո շնորհի օգնությամբ, այս տեսակ կյանքն է, որ թե՛ մահվան ժամանակ և թե՛ հավիտենականության մեջ անճառելի մխիթարությամբ պիտի լցնի մեզ (Տեր Գաբրիել քահանա):

77. Ձանացեք մտնել նեղ դռնով: Նայեցեք, օրինակ, ծառերին ու խոտերին, որոնք եթե ձյուն և անձրև չտեսնեն, չեն կարող պտղաբերել: Այդպես և մենք, որովհետև այս կյանքը ձմեռ է, եթե ճգնություն ու վիշտ չկրենք, չենք կարող մտնել Աստծո արքայությունը (Թեոփիլոս Եպիսկոպոս):

78. Ովքեր այս աշխարհում երբեք չեն դադարում մեղք գործելուց, մատնվում են Աստծո արդար դատաստանին ու երբեք զերծ չեն մնում տանջանքներից: «Չենք կամենում ճանաչել քո ճանապարհները. ո՞վ է Ամենակալը, որ ծառայենք Նրան», այսպիսի դառն ու դժնդակ պատասխան են տալիս նրանք, երբ որևէ մեկը խրատում է իրենց: Եվ այս ոչ միայն անհավատներն ու չարագործներն են, այլև բազում չար հավատացյալները՝ նրանք, ովքեր սոսկ հավատացյալի անունն են կրում, իսկ բարի գործերից հեռացած են: Սրանք թեպետ լեզվով հավատում են, սակայն սրտով հեռացած են և գործով ուրանում են Աստծուն: Ըստ այսմ. «Ձուր են Ինձ պաշտում, լեզվով հավատում, իսկ սրտով հեռացած, մեկուսի են ինձանից» (Գրիգոր Տաթևացի):

79. Պետք է Նրանից հաջողություն խնդրել հավատի և գործերի մեջ, քանզի հավատը, հույսը և սերը Աստծո շնորհներն են. ինչպես և՝ խոհեմությունն ու արդարությունը՝ ամեն ինչում: Այս ամենը Աստծո պարգևներն են, որոնք ում կամենում՝ տալիս է և ովքեր խնդրում են, ստանում են: Աստվածային առաքինությունների մասին է ասված. «Եթե մեկը հաց խնդրի հորից, մի՞թե նա քար կտա»: Հացը խորհրդանշում է հավատը, որ կյանքի պատճառ է, իսկ քարը՝ անհավատության: «Եվ եթե ձուկ խնդրի, մի՞թե օձ կտա»: Ձուկը հույսն է, իսկ օձը՝ հուսահատությունը: «Եվ եթե ձու խնդրի, մի՞թե կարիճ կտա». ձուն խորհրդանշում է սերը, որ բոլորաձև է ու կատարյալ, իսկ կարիճը՝ ատելությունը, որ խայթիչ է հոգու համար և ցավաբեր:

Նմանապես մարդկային առաքինությունների մասին Տերն ասում է. «Առանց Ինձ ոչինչ անել չեք կարող», քանզի Նա է, որ հաջողում է մեր մեջ կամենալն ու կատարելը» (Փիլիպ. 2:15) (Գրիգոր Տաթևացի):

80. Ովքեր ունեն Սուրբ Հոգու տաճար լինելու ցանկությունը և աստվածային սիրո բաղձանքը, նրանք սպասում են Աստծո Որդու գալստյանը և փափագում անմահ փառքը, միշտ խորհում վերինի մասին և հանապազ տենչում այնտեղի ուրախությունը, ուրանում, արհամարհում

առօրեական բաները և օրըստօրե վեր բարձրանում ոչ միայն հավատքի ճշմարտությամբ, այլև՝ վարքի առաքինություններով, միշտ հսկում սրտի սրբությամբ և հանապազ պատրաստ լինում հոգիների անարատության համար. նաև ընթանում և ապրում են աշխարհում՝ ոչ ըստ այս աշխարհի հաճույքների, այլ ինչպես այլ աշխարհի օտարականներ, թափառականներ և մանուկներ, նեղվում ու մաշվում են բազում կարիքներից, բայց զորանում այն հույսով, թե՝ «Ուր ես եմ, այնտեղ և Իմ պաշտոնյան կլինի» (Հովհան. 12:26): Այսպիսին են հոգևորների պատիվները և աստվածասերների պարգևները (Հովհ. Մանդակունի):

81. Որքան զրկանք կրես, հոգնես, նեղվես և համբերես՝ այնքան անապական գանձ կպատրաստես քեզ համար երկնքում, իսկ եթե տրտնջում ես ու նեղսրտում՝ զուր ես աշխատում, անվարձ կմնաս (Եզնիկ Կողբացի):

82. Հուսահատների առաջնորդը Սադայելն է, որը ջանում է մարդկանց գցել հուսահատության մեջ, որպեսզի տանի նրանց դեպի անդառնալի հավիտենական կորուստ: Քանզի, եթե մեկը մեղանչի, հնարավոր է, որ զղջմամբ ետ դառնա և թողություն գտնի՝ հուսալով Աստծո ողորմությանը, իսկ ովքեր հուսահատվում են, հակառակվում են Աստծո ողորմությանը, դրա համար դևերի նման միշտ անզեղջ են մնում: Այդ իսկ պատճառով դևերը տեսնում են, թե որոնք են նեղության մեջ, և նրանց միտքն են գցում տեսակ-տեսակ հուսահատ մտածումներ, որոնք ո՛չ եղել են, ո՛չ կարող են լինել: Մտածել են տալիս նաև, որ հնարավոր է քեզ համար անհնարինը, և դրանով իսկ ծանր բեռներով բեռնավորվելու մտածումներով ընկճում են փորձվողների միտքը, որպեսզի անդարձ հուսաբեկ անեն: Այս պատճառով, հարկավոր է, որ ամենքը արթուն և զգաստ մնան, չանսան դևերի թելադրանքին, ապավինեն Աստծուն և արիաբար տոկան նեղությունների մեջ (Պողոս Պատրիարք):

83. Սակայն կատարյալ փրկությունն առանց առաքինի գործերի, ինքնըստինքյան չի լինում, քանզի՝ «Առանց գործերի հավատքը մեռած է» (Հակ. 2:26), - ասում է առաքյալը, ինչպես գործերը՝ առանց հավատքի: Քանզի գրված է, թե դևերը ևս հավատում են: Եվ ոչ միայն հավատում են, այլ նաև՝ սարսափում, բայց ոչինչ չեն շահում առանց գործերի (Գրիգոր Նարեկացի):

84. Իզուր չէր նաև Քրիստոս ասում աշակերտներին. «Նրանով կճանաչեն ձեզ բոլորը, թե իմ աշակերտներն եք, երբ միմյանց սիրեք» (Հովհ. 15:35): Չասաց թե՝ «Ինձ աշակերտելու նշանն այն է, երբ հիվանդներին եք բժշկում, կամ՝ դևեր հանում, կամ՝ մեռելներին հարություն տալիս, կամ՝ լեռներ տեղաշարժում», այլ՝«երբ սիրում եք միմյանց»: Քանզի գիտեր, թե երբ ճշմարիտ սիրով սիրում են Աստծուն և ընկերոջը, դրա հետ նաև պատվիրաններն են կատարում (Գրիգոր Նարեկացի):

85. Եվ ա՛յս է, որ ասում է Որոտման Որդին, թե՝«Ամեն ոք, ով ատում է իր եղբորը, մարդասպան է» (Հովհ. 3:¡5), քանզի թեպետ մարմնով չսպանեց, սակայն կամքով ու հոժարությամբ սպանեց: Եվ այս կես սպանություն է: Քանի որ մարդ հոգի է և մարմին, և հոգին մարմնից մեծ է, նա հոգով սպանեց, քանզի ինչպես որ մարմինը գործով է սպանվում, այդպես էլ հոգին՝ կամքով ու հոժարությամբ (Գրիգոր Նարեկացի):

86. Ուստի բազում զգուշությամբ ու արթնությամբ պետք է ամեն ոք հսկի իրեն, որպեսզի իր բանական հոգին, որն Աստծու պատկերն է, սեփական առաքինություններով զարդարի, որով կփայլի նախկին լուսատիպ

կերպարանքով, որով անվայրափակ էության տաճարն ու բնակարանը կլինի՝ ըստ Տիրոջ խոսքի. «Ես ու Հայրը կգանք և նրա մոտ կօթևանենք» (Հովհ. 14:23) (Գրիգոր Նարեկացի):

87. Ինչո՞ւ որս եղար մահվան ծուղակին, թողած արահետը վստահելի: Ինչո՞ւ պատրանքների կարթով բռնվեցիր, ով դու, հաղորդակիցդ Կենդանարարի մարմնին (Գրիգոր Նարեկացի):

88. Արդ, ո՞վ պետք է մեզ ազատի անդենական տանջանքներից, կամ ո՞վ մեզ ողորմության կամ քավության կարժանացնի: Աղաչում եմ, արթնանանք և թոթափենք մեր վրայից Դավթի ասած այն քունը, որ մահվան է առաջնորդում, և փառավորենք Աստծուն մեր տկարությամբ (Սարգիս Շնորհալի):

89. Ամեն մարդ, որ բարի գործեր չունի և չարիքի մեջ չի զղջում և Աստծո սպառնալիքներից չի վախենում, այնպիսին նման է դևի և հավատքից ոչ մի օգուտ չի ստանա: Իսկ եթե Աստծո պատվիրանները պահենք և կատարենք, այն ժամանակ ճշմարիտ հավատացյալներ կդառնանք: Այս մեր Տերն էլ ասաց. «Եթե խոսքս կատարեք՝ աշակերտներս կլինեք, և ճշմարտությունը կազատի ձեզ» (Հովհ. 8:31) (Սարգիս Շնորհալի):

90. Տեսնո՞ւմ ես, որ ամեն տեղ գովելի է նեղությունը և մեզ համար անհրաժեշտություն է: Երբ մարզական մրցումների ժամանակ առանց դրա՝ այսինքն առանց մարզումների մնանք, վնասակար կերակուրներից չհրաժարվենք, օրենքների համեմատ մեր անձը չդաստիարակենք և տքնությամբ ու նման բաներով չզորանանք, չենք կարող շահել փառքի պսակը: Իսկ որչափ ավելի մեզ պետք է մարզվել այստեղ՝ հոգևոր պատերազմի ժամանակ՝ անմարմին թշնամիների դեմ ճակատամարտի դուրս գալու համար (Սարգիս Շնորհալի):

91. Մեր կյանքը զգուշությամբ վարենք, որպեսզի մահվան որոգայթի մեջ անպատրաստ չբռնվենք, այլ արթնությամբ քննենք մեր կյանքը, որ չլինի թե ննջենք այն քնով, որի վախճանը տիրական մահն է մարդու համար: Այդ ճանապարհի համար անհրաժեշտ ու պատշաճ պաշարը ամբարենք. չլինի թե պետք եղածը չգտնենք ու սովալլուկ կորսվենք (Սարգիս Շնորհալի):

92. Եվ ահա եկել, հասել է ժամանակը, որ ամեն մի կեղտ կոչված բան հեռացնենք մեզանից (Վարդան Մամիկոնյան):

93. Դուք՝ Սուրբ Հոգուց ճշմարտապես ծնվածներդ, Աստծո որդիներ եք և Քրիստոսի ժառանգակիցներ: Թող ոչ ոք ձեր բաժինը ձեզանից չկտրի և ձեզ օտար ու խորթ դարձնելով դատարկաձեռն թողնի (Ղևոնդ Երեց):

94. Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել, և ոչ ոք չի կարող թե՛ Տիրոջ բաժակն ըմպել և թե՛ դևերի: Հնարավոր չէ և՛ Տիրոջ սեղանից վայելել, և դևերի սեղանից: Թող Աստված ձեր կամա և ակամա գործած մեղքերն այլևս չհիշի, այլ ձեզ հաստատի գիտության բովի և արդարության խրատի մեջ: Նա, որ ամբողջ տիեզերքն իսկ լուսավորեց, ձեզ ևս կլուսավորի իր շողարձակ շնորհներով, միայն թե ինքներդ ձեզ մոտեցրեք Աստծո առաջ աներկյուղ մտքով (Իսրայել եպիսկոպոս):

95. Վերջին օրերին պիտի հանդես գան բազում ուսումնատյացներ, ծույլեր, դատարկախոսներ, վատաբաններ և ամբաստանողներ: Եվ որտեղի՞ց պիտի գտնես մարդկանց մեջ ճշմարտություն, երբ նրանք պնդաճակատ, եսասեր, ընկերատյաց, բամբասող, բանսարկու, ստախոս, մեծամիտ, փառասեր, հարբեցող և հեշտասեր են լինելու: Այսուհետև մարդիկ չեն փառաբանելու Աստծուն, և մարդկանց մեջ չի լինելու ճշմարտություն:

Իմ որդիներ, ես լալագին ու ողբագին, հառաչող սրտով խրատում եմ ձեզ, որովհետև շատերը հեռանում են հավատքից և ուրանում Քրիստոսին: Այդ է պատճառը, որ խավարը պատեց բոլոր արարածներին (Հովհաննես Կոզեռն):

96. Ամենայն մարդ, որ կամենում է մոլորվել ու գնալ խոտոր ճանապարհով, թե հնար կա, որպեսզի բռնությամբ կամ աղաչելով, թեկուզ և ընծաներով կարողանամ հետ պահել, անվեհեր հոգով պիտի ջանամ թույլ չտալ, որ այդպիսինը մատնվի հավիտենական կորստի (Գյուտ Կաթողիկոս):

97. Որքան որևէ մեկն ուշանում է հաղորդությունից, դևերն ուրախանում են, որովհետև նրանց համար դյուրորսալի է փրկական խորհրդից հեռացածը: Իսկ երբ որևէ մեկը հաղորդվում է, զարհուրում են ու խույս տալիս և ավելի հեռու փախչում, որովհետև նրա մեջ իրենց տեղ չեն գտնում: Քանզի նա, ով Քրիստոսի տաճար է լինում, նրանում դևերին մեհյան չի՛ հաջողվում ստեղծել:

Ուստի, աղաչում եմ ամենքին և հայցում, որ հաղորդվեն Աստծո երկյուղի ու սիրո փափագով, որպեսզի ոչ ոք բնավ անարժանաբար չհաղորդվի և չբարկացնի Աստծուն, կամ հուսահատությամբ չհեռանա և կորստյան չմատնվի, այլ այս երկու ծայրահեղություններից էլ խուսափի՝ թե՛ անառակաբար խիզախելուց և թե՛ հեղգությամբ և հուսահատությամբ հապաղելուց ու հեռանալուց (Խոսրով Անձևացի):

98. Բազում աղոթքներ են մեզ պետք, բազում արտասուքներ՝ հաճախակի պաղատանքներով և մեծագույն ճգնությամբ հայցելու Աստծուց, որպեսզի արժանի լինենք լուսավոր միտք ստանալու, որով կբորբոքվի մեր մեջ աղոթքի բաղձանքն ու Աստվածային Գրքի վերծանությունը (Խոսրով Անձևացի):

99. Այսպիսին են ցրված միտք ու զբաղված բարք ունեցողները, որոնց մեջ սպառվել է աստվածային Կտակարանների ունկնդրության սերը, որոնք շրջում են աշխարհում ինչպես կույրը: Քանզի կամ բնավ չեն ընթերցում և կամ ինչ որ ընթերցում են՝ ոչ թե սիրով ու փափագով, այլ՝ որպես հարկադիր մի բան և պարտքերի հատուցում: Քանզի ոչինչ ավելի ողորմելի չէ, քան Սուրբ Գրքի հանդեպ սիրո և աստվածային պատվիրանների վերծանության բաղձանքի սպառումը:

Եվ այս՝ ի՞նչ պատճառով: Որովհետև սերը սպառվեց, երկյուղը վերացավ, զարտուղի ընթացանք, սիրեցինք աշխարհը և այն, ինչ աշխարհում է, ընթացանք ոչնչի հետևից, կասեցվեցինք հույսից և ցանկացանք միայն առօրեականը, քանզի մարմին դարձանք: Եվ սիրեցինք մարմնավոր բաները և դրանց ետևից գնացինք՝ հեշտության, զբաղմունքների, ծուլության, նախանձի և ատելության և բոլոր մյուս չարիքների, փառքի, պատվի, իշխանասիրության և ագահության:

Այս պատճառով աղաչում եմ՝ արթնացե՛ք, արթնացե՛ք և առավել ևս թոթափվենք սատանայական մոլությունների արբեցությունից: Մի կողմ նետենք հրեական քողը (կեղծավորությունը) և լուսափայլ մտքո՛վ նայենք Աստծուն (Խոսրով Անձևացի):

100. Չար է մեղքի երևույթը, և առավել չար է գործողի համար, այնքան որ մինչև իսկ վերացնում է Աստծո երկյուղը մեղանչողի սրտից և չի թողնում նայել Արարչի շնորհին, այլ զբաղեցնում է միայն երկրավոր բաներով ու թմրեցնում խավարի խորքերում: Մեկին՝ աշխարհական ցնորքների, մյուսին՝ արծաթասիրության, մեկ ուրիշին՝ փառամոլության, երրորդին՝ նախանձի և ատելության մեջ: Եվ մեր կյանքի թշնամին մղում է մեզ չարիք գործել

սիրով և հոժարությամբ՝ իբրև թե իրավացիորեն:

Որպեսզի, չիմանալով սնոտի սիրո հետևանքը, ոչ ոք չզղջա և ապաշխարությամբ չփրկվի, այլ չարի պատրանքներով զբաղվելով, խոր գիշերվա մեջ թմրածի պես, անգիտաբար խավարն իբրև լույս սիրի (Խոսրով Անձևացի):

101. Ո՛վ դուք, Քրիստոսի հոտի հովիվնե՛ր և խնամակալներ, չե՞ք լսել Սողոմոնի ասածը. «Հզորները զորավոր Դատաստան կընդունեն, - ասում է, - իսկ խառնիճաղանջը ներելի ողորմությանը կարժանանա»: Քանզի առաջնորդներն ու վերակացուները ոչ միայն իրենց անձի, այլև իրենց հնազանդվողների սխալների համար պատուհասների պատիժներ պիտի հատուցեն (Խոսրով Անձևացի):

102. Զգուշացե՛ք, ուրեմն, հովիվնե՛ր, զգաստացե՛ք և աչալո՛ւրջ եղեք ձեր գործում՝ միշտ ձգտելով աստվածասեր և անարծաթասեր լինել: Քանզի, ինչպես ասում է իմաստունը. «Չի օգնի ունեցվածքը մեծ Ատյանի առաջ», այլ միայն արդարակշիռ լինելն է փրկություն շնորհում հավիտենական մահից:

Արթնացե՛ք, արթնացե՛ք և առավել ևս զգաստացեք, որպեսզի չլսեք Տիրոջից այն սոսկալի խոսքը, թե՝ «Սիավասիկ, ես հովիվներիդ վրա եմ և դատաստանով կդատեմ ձեզ» (Եզեկ. 34:10) (Խոսրով Անձևացի):

103. Ուստի աղաչում եմ բոլորիդ, որ արդարության գործերն էլ միացնեք ձեր ճշմարիտ հավատքին, որն ավազանի ծնունդից ստացաք և հաստատությամբ պահում եք, որպեսզի միայն մեկ աչքով չլուսավորեք ձեր հոգիները, այլ երկուսով պայծառանաք: Եվ մի՛ վստահեք անմիտների սնոտի հույսին, որոնք ասում են, թե միայն հավատքի ճշմարտությունը բավական է քրիստոնյային՝ փրկվելու տանջանքներից և արժանի դառնալու Արքայությանը (Ներսես Շնորհալի):

104. Քանզի թեպետ իմաստություն ունեցողը գիտե արդարության ճանապարհի շավիղները խոսքով ուսուցանել, բայց եթե ինքը գործով արդարության ճանարպարհով չի քայլում, չի կարող համոզել ուրիշներին ընթանալ, նմանապես էլ նա, ով առանց Սուրբ Գրոց գիտության միայն սուրբ վարքով է ապրում, թեև անձամբ Աստծո օրենքների ճանապարհով է գնում, բայց քանի որ ուրիշներին ըստ պատշաճի իմաստությամբ առաջնորդել չգիտե, այդ պատճառով բազմաթիվ անկարգություններ են մուտք գործում եկեղեցի (Ներսես Շնորհալի):

105. Սուրբ. առաջին՝ սուրբ է նա, ով մաքուր է հոգու հետ պատերազմող ամեն ախտից, ով սկզբից ո՛չ վերքեր է ընդունում և ո՛չ էլ՝ դեղերի է կարոտ: Երկրորդ՝ սուրբ է նա, ով թեպետ խոցվում է մեղքերի նետերով, սակայն մինչև վերջ չի ենթարկվում թշնամուն, ախտերի հեշտանքին տեղի տալով՝ չի խոցոտում իր հոգին և դա, սովորության վերածելով, իր համար չի դարձնում երկրորդ բնություն, այլ մանավանդ՝ անցյալի խոցերը բժշկում է ապաշխարության դեղերով և առաջիկայում սպասվողներից զգուշանում է աղոթքի ու պահքի զենքերով և զգայարանների պահպանությամբ՝ սովորական նետերով վերստին չխոցվելու և դրանք այնքան ատելու, որ մինչև իսկ դրանց հիշատակումը ոչ թե հեշտություն, այլ տրտմություն բերի մտքին:

Արդ, ով այս առաջինին կամ երկրորդին է պատկանում, նա է սուրբ և առաքելական այս աստիճանին արժանավոր: Իսկ նա, ով հոժարությամբ է տեղի տալիս ախտերին և չի պատերազմում դրանց դեմ, այլև խնամքով չար խմորն իր մեջ է թաքցնում և միշտ խոցված հոգով չի ատում խոցման պատճառները, այլ ավելի է սիրում, չի շտապում խոցերը բժշկել, այլ օրըստօրե նորոգում է վերքերը, այնպիսին ո՛չ սուրբ է, ո՛չ սուրբ է ասվում և ո՛չ էլ Աստծո

ընտրությամբ կանչվում է՝ աստվածային գործերին սպասավորելու, այլ իր ախտերից մղված, օգտվելով Աստծո ներողամտությունից, ձգտում է դրանց՝ ի կորուստ իր և ուրիշների անձի (Ներսես Շնորհալի):

106. Առաքինիների ու պղերգների, հավատացյալների ու անհավատների ընտրություն և ըստ արժանիքների հատուցում պիտի լինի: Պատիվը, մեծարանքն ու երանությունները հաղթողներինն են, ովքեր մարտնչեցին մեղքերի դեմ ու հակառակվեցին, հաղթեցին ու պսակվելով փառավորվեցին: Այլև նրանցն են, ովքեր ճշմարտապես ապաշխարեցին իրենց հանցանքները: Իսկ տանջանքների ահավոր սպառնալիքը պաշարում է անհիրավներին ու ամբարիշտներին և տանում դեպի պատիժների տոչորումը, որովհետև չապաշխարեցին (Գրիգոր Լուսավորիչ):

107. Տիրոջ խոսքը ծանրաբեռնվածներին խոստովանությամբ դեպի ապաշխարության է կանչում, մոլորվածներին՝ դեպի ճշմարտության գիտություն, արդարության ճանապարհներից շեղվածներին ուղղում, խոստովանությամբ մահաբեր վարքը վերստին նորոգում կյանքի մեջ և սատանայի բոլոր խարդախությունները լուծարում: Քանզի «Կամենում է, որ ամեն մարդ ապրի, - ասում է առաքյալը, - և ճշմարտության գիտությանը հասնի ամենագյուտ սիրո տեսչությամբ» (Գրիգոր Լուսավորիչ):

108. Տեսնո՞ւմ եք, եղբայրներ, որ Աստված մեզ հետ վարվում է ինչպես որդիների՝ մեզ խրատելու համար, որպեսզի մեզ պիտանի դարձնի, քաջի անուն տա մեզ իբրև ժառանգություն և մեծամեծ վարձերի արժանացնի: Իբրև հատուցում Նա մեզնից մի փոքր առաքինություն է պահանջում՝ որ Իրեն սիրենք, որի փոխարեն Նա անթիվ, անչափ, անհաշիվ, անհամեմատ բարիք, բարերարություն ու հրաշքներ է գործում և Իր մարդասիրությամբ բարին հատուցում, որովհետև Նա նույնիսկ Իր անձը չխնայեց մեզ համար, այլ դարձավ մեզ համար կերակուր և ըմպելիք (Ներսես Մեծ):

109. Աղաչում եմ, մի անտեսեք Քրիստոսի բարի երախտիքը, այլ մնացեք ուղիղ վարքի մեջ, քանզի Նրա բեմի առջև ենք կանգնելու՝ յուրաքանչյուրս ըստ մեր գործերի հատուցում ստանալու համար: Ձեր անձերից թոթափեցեք չարիքը, մարմիններդ մի խնայեք, որովհետև դրանք հեռացնում են Աստծուց:

Եվ արդ, բոլորիդ անունից անպարտ եմ, որովհետև գիշեր - ցերեկ չդադարեցի խոսել, ուսուցանել և հաստատել ձեզ Տիրոջ երկյուղի և սիրո մեջ: Ձեր բոլոր նեղությունների մեջ գոհացող եղեք, հաստատ մնացեք և ամուր բռնելով իմ ուխտի խրատները, մշտապես խորհեք Տիրոջ երկյուղի ու սիրո մասին, որպեսզի համբերողների վարձք ստանաք մեր Աստված Քրիստոսից, Որին փառք հավիտյանս: Ամեն (Հակոբ Մծբնեցի):

Հայրերի վարքից

1. Հայր Հովհաննես Կարճահասակը խնդրեց Աստծուն, և վերցվեցին իրենից ամեն տեսակի մարմնի պատերազմները, ու դարձավ ազատ ամեն ինչից: Երբ այս եղավ, գնաց մի մեծ ճգնավորի մոտ, պատմեց այդ մասին և ասաց. «Գտնվում եմ մեծ հանգստության մեջ, որովհետև ոչ մի պատերազմ չկա իմ դեմ»: Ասաց նրան ճգնավորը. «Գնա, դարձյալ աղաչի՛ր Տիրոջը, որ պատերազմը թողնի քո մեջ, որովհետև պատերազմելով են ուղղվում»: Եվ

նա աղաչեց Տիրոջը, ու պատերազմը նորից եկավ, և այլևս չէր աղոթում, որ Տերը այն վերցնի, այլ խնդրում էր, որ համբերություն տա բոլոր փորձություններին դիմանալու (Հարանց վարք):

2. Մի բժիշկ հարցրեց ծերին՝ «Բոլոր հոգևոր ցավերի դեղերը գիտե՞ս, ով հայր»: Ծերը պատասխանեց. «Շատ բան գիտեմ, եթե լսես: Վերցրու ապաշխարության շաքարը, եղբայրսիրության ծաղիկը, աղքատսիրության տերևը, խոնարհության պտուղը, լցրու ողորմության աղացի մեջ և աղա այն՝ ծնրադրելով: Այնուհետև քամի՛ր նեղության սրբիչով և արտասվախառն խմի՛ր ամբողջ գիշերվա ընթացքում: Սա է բոլոր ցավերի դեղը, որ ոչ միայն ներքին մարդուն է բժշկում, այլև արտաքինն է սրբում, նորոգում ու մաքրում» (Հարանց վարք):

3. Կար մի եպիսկոպոս, որը շատ թշվառ մահով հեռացավ աշխարհից: Մեկը երազով տեսավ, որ եպիսկոպոսի հոգին անասելի տանջանքներով քաշեցին նրա մարմնից և կանգնեցրին դևերի իշխանի առաջ, որը ողջունեց նրան և բաժակը, որ ուներ իր առաջ՝ տվեց եպիսկոպոսին ասելով. «Ո՛ղջ եղիր, ժողովրդի իշխան, ո՛ղջ եղիր. խմի՛ր իմ բաժակից, որովհետև երկար տարիներ ծառայել ես ինձ՝ հավատարիմ և հոժարակամ»:

Իսկ երբ նա հրաժարվեց, սպասավորները ուժով բռնադատեցին՝ ստիպելով որ խմի: Հենց որ խմեց, նույն ժամին ականջներից, քթից, աչքերից և բերանից բոց ելավ ու այսպես տարտարոսի գուբն ընկավ: Ահա այս է վախճանը նրանց, ովքեր անարժանաբար իշխանություն են ընդունում և չարաշահում այն (Հայելի վարուց):

4. Մի վանականի լուր են բերում, որ իր հայրը մահացել է: Իսկ վանականը դիմելով լուրը բերողին ասում է. «Դադարեցրու սրբապիղծ հայտարարությունդ, քանի որ իմ Հայրն անմահ է» (Եվագր Պոնտացի):

5. Մի ծերի հարցրին. «Ինչպե՞ս են ոմանք ասում, թե մենք հրեշտակներ ենք տեսնում»: Ծերը պատասխանեց. «Երանի՜ նրանց, ովքեր իրենց մեղքերն են տեսնում» (Հարանց վարք):

6. Մի եղբայր, որն ապրում էր հայր Պիմենի հերևանությամբ, գնաց մի հեռավոր երկիր և այնտեղ հանդիպեց ճգնավորի, որին սիրում և պատվում էին տեղացիները: Այս եղբայրը ճգնավորին պատմեց հայր Պիմենի վարքի մասին:

Եվ երբ նա ետ դարձավ Եգիպտոս՝ իր բնակավայրը, միառժամանակ անց մեծ ճանապարհ կտրելով այս ճգնավորը եկավ Եգիպտոս, որպեսզի տեսնի հայր Պիմենին: Եվ երբ այս եղբայրը տեսավ ճգնավորի անսպասելի իրենց երկիր գալը, շատ ուրախացավ և սիրահոժար կատարեց նրա խնդրանքը՝ առաջնորդեց հայր Պիմենի կացարանը: Ներս մտնելով՝ եղբայրը պատմեց հայր Պիմենին իր երկրում ճանաչված և սիրված այս ճգնավորի մասին, և թե եկել-հասել է՝ հայր Պիմենին տեսնելու և հոգեշահ զրույցներ վարելու համար:

Հայր Պիմենը ուրախությամբ ընդունեց ճգնավորին: Նրանք ողջագուրվեցին և սկսեցին հոգևոր զրույց վարել: Հյուրն սկսեց Սուրբ Գրքի խորհուրդներից և երկնային գաղտնիքներից խոսել: Բայց հայր Պիմենը շուռ տվեց դեմքը և չպատասխանեց: Վերջինս տեսնելով, որ ծերը չի խոսում իր հետ, տխրեց և դուրս գալով խցից՝ ասաց առաջնորդող եղբորը. «Իզուր կտրեցի այսքան երկար ճանապարհ: Եկա ծերի մոտ, իսկ նա չի էլ ուզում խոսել ինձ հետ»: Եղբայրը դարձավ հայր Պիմենի խուցը և հարցրեց. «Աբբա, այս պատվական ճգնավորը հանուն քեզ կտրել-անցել է այսքան ճանապարհ, ինչո՞ւ չես խոսում նրա հետ»:

Ծերը պատասխանեց. «Ձավակս, նա բարձրերից է և խոսում է

երկնային գաղտնիքներից, իսկ ես ցածրերից եմ և խոսում եմ երկրավոր բաներ: Եթե նա ցանկանար խոսել ինձ հետ անձի հոգևոր տկարությունների և թուլությունների մասին, ես կպատասխանեի, բայց նա խոսում է մեծ-մեծ բաներից, իսկ ես դրանք չեմ հասկանում»:

Եղբայրը վերադառնալով՝ ճգնավորին ասաց. «Ծերը չի սիրում խոսել Սուրբ Գրքի խրթին խորհուրդներից, սակայն պատասխանում է նրանց, ովքեր հարցնում են մարդկային կրքերի և թուլությունների մասին»:

Այցելուն սաստիկ զղջաց և դառնալով ծերի կացարանը՝ ասաց. (Աբբա, ինչպե՞ս վարվեմ, ես կրքերով և մեղքերով բռնված մարդ եմ(:

Ծերը՝ դիմելով նրան, զվարթաձայն պատասխանեց. «Այս պահից օրհնյալ է քո գալուստը, բաց արա բերանդ և խոսիր այդ մասին և լցվիր շնորհով»:

Ճգնավորն այս զրույցներից մեծ օգուտ քաղեց և ասաց. «Արդարև, այս է փրկության ճշմարիտ ճանապարհը»:

Նա վերադարձավ իր երկիրը՝ գոհանալով Աստծուց, որ արժանացրեց իրեն նման մեծ սրբին տեսնելու (Հարանց վարք):

Աղոթք

Լույս ճշմարիտ Քրիստոս, որ լուսավորում ես ամեն մարդու, լուսավորի՛ր մեղքերով խավարյալիս, բա՛ց իմ սրտի աչքերը և հաստատի՛ր Քո պատվիրանների երկյուղով ու սիրով:

Առաջնորդի՛ր ինձ, Տե՛ր, նեղ և նուրբ ճանապարհով, ինչպես առաջնորդեցիր Քո սուրբերին և զորացրո՛ւ ինձ տկարությունից՝ ժուժկալությամբ, համբերությամբ և ջերմեռանդ սրտով գնալու Քո ճանապարհով:

Հալածի՛ր, Տե՛ր, խավարն իմ հոգուց և հագցրո՛ւ Քո արդարության ճառագայթների լույսը: Զարդարի՛ր իմ սիրտը եկյուղով, զղջմամբ և արտասուքով՝ երկնչելու Քո դատաստաններից և պահելու Քո բոլոր պատվիրանները:

Հաստատի՛ր, Տե՛ր, իմ հոգում Կենաց Լույսի խաղաղությունն ու պայծառությունը, որպեսզի չխոտորվեմ աջ կամ ձախ և չդատապարտվեմ Քո Գալստյան Օրը՝ պահանջելով ինձանից մինչև վերջին նաքարակիտը:

Ձեռք մեկնիր, ինչպես Պետրոսին. մաքսավորի պես արդարանալ եմ աղերսում:

Շնորհի՛ր, ինչպես ավազակին, բա՛ց ինձ Կենաց ճանապարհի և մեծ արքունական առագաստի դուռը:

Արձակի՛ր ինձ, Տե՛ր, իմ մեղքերի կապանքներից, վերստին նորոգի՛ր մեղքով հնացածիս և լուսավորի՛ր մարմնիս ցանկությունից խավարյալիս՝ գնալով խաղաղության ճանապարհով, որպեսզի իմ աչքերը տեսնեն Քո փրկությունը, որ պատրաստեցիր Քո սուրբերի համար:

Ազատի՛ր ինձ, Տե՛ր, մեղքերի ծառայությունից և դասի՛ր Քո ծառաների շարքում, ովքեր սիրեցին Քեզ և պահեցին Քո պատվիրանները: Տո՛ւր իմ սրտին նրանց երկյուղը և ուսուցանի՛ր ինձ գնալ նրանց ընթացքի շավիղներով:

Ամրացրո՛ւ ինձ, Տե՛ր, Քո երկյուղով, զորացրո՛ւ Քո զորությամբ, առողջացրո՛ւ իմ հոգու հիվանդությունը, բժշկի՛ր մարմնիս ցավերը և

հաստատի՛ր իմ սրտում Քո սրտի ջերմությունը, որ չարչարանակից լինեմ Քո սուրբերին:

Ե՛տ բեր սատանայից գերվածիս և մեղքերով եգիպտական խիստ տանջանքների վաճառվածիս, փրկի՛ր դևերի բռնակալ չար սպասավորներից, դո՛ւրս բեր փշոտ մեղքերից և դի՛ր Ավետյաց Երկրում:

Մի՛ դատիր և մի՛ դատապարտիր ինձ, Տե՛ր, ըստ իմ անբավ զազիր գործերի, և մի՛ դասիր ինձ ուրիշների հետ, որոնք զայրացրեցին Քեզ, այլ փառավորի՛ր փառավորյալների հետ և պսակի՛ր պսակյալների հետ և ուրախացրու բերկրյալներիդ հետ, որոնցից շարունակ փառաբանվում է Ամենասուրբ Երրորդությունդ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն

(Եփրեմ Խուրի Ասորի):

ՆԱՐԵԿ

Բան ԻԳ

Թե զինվոր տեսնեմ, մահ եմ սպասում,
Թե պատգամաբեր՝ արհավիրքի բոթ,
Եթե գրագիր՝ կորստյան մուրհակ,
Թե օրինապահ՝ անեծք ու նզովք,
Եթե քարոզիչ՝ ոտքերի փոշու թոթափում միայն,
Եթե բարեպաշտ՝ հանդիմանություն,
Եթե անզգամ՝ կսկիծ ու մորմոք:
Թե ջրով փորձվեմ, պիտի խորտակվեմ,
Թե դեղ ընդունեմ, պիտի մահանամ:
Եթե տեսնում եմ ինձ հասնող բարիք,
Փախուստ եմ տալիս՝ չար կասկածներով,
Թե բարձրացրած ձեռք՝ կորանում նկուն,
Եթե տեսնում եմ ինձ հասնող բարիք,
Փախուստ եմ տալիս՝ չար կասկածներով,
Թե բարձրացրած ձեռք՝ կորանում նկուն,
Թե մի խրտվիլակ՝ սարսում ահաբեկ,
Ընդոստնում՝ ամեն թեթև թնդյունից,
Դողում, երբ հանկարծ հրավիրվում եմ խրախճանության:
Իսկ եթե մեծիդ ես ներկայանամ, պիտի սարսափեմ,
Պիտի կարկամեմ, եթե կանչվելու լինեմ հարցումի,
Եթե իրավամբ քննվելու լինեմ, պիտի համրանամ:
Արդ, իրար վրա կուտակված այսքան
Ամենաթշվառ ու ողորմագին վիշտ-տագնապներս,
Որ զգայության խորքերում սրտիս գոյատևելով՝
Անբժշկելի ցավերով՝ ներքուստ
Խոցոտում են այն նետերով անտես,
Որոնք մշտակիր, անարտաքսելի,
Հանապազամուխ ու հարամնաց խրված հոգուս մեջ,
Ամբողջությամբ այն լցրած շարավով

Ու պատճառելով կրկնակի հարված՝
Չարաչար մահս են կանխագուշակում:
Գաղտնի, ծածկապես ներսս մթերված՝
Երկաթը պատող թարախը անվերջ տագնապում է ինձ՝
Շնչառությանս միջոցին ներքուստ
Անբուժելի ու խորը վերքերի ցավեր ազդելով,
Որից նվաղած ձայնից չարաչար աղաղակները,
Արտասվախառն ու կողկողագին
Թախիծով հոգուս, իղձ-աղերսներով,
Այլև ինձ համար՝ ինձ հետ աղոթող՝
Երկրաստեղծ բոլոր նահատակների
Ամենանվեր ողբ ու հեծությամբ՝
Այս ստորային վայրերից դեպի
Ամենահնար բարեգործիդ եմ երկինք առաքում:
Շնորհի՛ր, ո՜վ տեր, անդորրություն ու հանգստավետ կյանք՝
Զուր աշխատությամբ խեղճ հոգնաբեկիս,
Դո՛ւ, որ համայն ես ամեն ինչի մեջ
Եվ ամեն ինչով միշտ փառաբանված:

Բան ՂԲ

Հղի՛ր պահապան զորությունն աջիդ,
Փրկի՛ր գիշերվա երկյուղից խավար,
Փրկի՛ր չար դևից,
Որ հիշատակը քո սոսկալի ու սրբազան անվան
Համբուրելով միշտ շուրթերով հոգուս,
Շնչիս անձկությամբ,
Ապրեմ՝ պահպանված բոլոր նրանց հետ,
Որոնք կանչում են քեզ ամբողջ սրտով:
Արդ, դրոշմից քո խաչի նշանի,
Որ աստվածային արյամբդ ներկելով դու նորոգեցիր,
Մկրտեցիր մեզ որդեգրության շնորհով նրա
Եվ հորինեցիր քո նմանությամբ՝ պատկերիդ փառքով,-
Այդ պարգևներից աստվածային թող դևը ամաչի,
Ի դերև ելնեն խարդավանքները նենգ ու դժնախոհ,
Խափանվի ամեն վարմ ու որոգայթ,
Մարտնչողները պարտված կործանվեն,
Խորտակվեն բոլոր զենքերը սուրսայր,
Մշուշը ցնդի, մութը փարատվի,
Եվ մառախուղը չքանա անհետ:
Թող որ բազուկդ հովանի դառնա և աջդ կնքի,
Քանզի գթած ես, Տե՜ր, և ողորմած,
Անվամբդ են կոչվում ծառաներդ քո:
Եվ քեզ, Սուրբ Հոգովդ, բարձրյալ Հորդ հետ,
Իշխանությո՜ւն, փա՜ռք, հավիտյաններից հավիտյանս, ամեն:

(սբ. Գրիգոր Նարեկացի)

Դու ես այդ մարդը, որ արել է այդ բանը: Այսպես է ասում Իսրայելի Տեր Աստվածը:
Բ Թագավ. 12:7

Պողոս առաքյալի, Դավթի և Սողոմոնի մասին

Երբ Պողոս առաքյալը դեռ Սավուղ էր, նա Աստծո Եկեղեցու մեծ հալածիչ էր: Ինչո՞ւ էր հալածում քրիստոնյաներին: Զարմանալի է, բայց դա անում էր Աստծո փառքի համար, քանի որ շատ կրոնասեր էր: Եվ հետագայում տեսնում ենք, որ նա հայտնություն ուներ, թե ինքն ընտրված է Աստծո կողմից, ինչպես որ ինքն է ասում. «Աստված ինձ մորս արգանդից ընտրեց»: Նաև տեսնում ենք, որ շատ ծանրակշիռ պատճառներ ուներ իրեն ընտրյալ համարելու, քանի որ թլփատված էր ութերորդ օրը, Իսրայելի ցեղից էր, եբրայեցի՝ եբրայեցի ծնողներից, Բենիամինի սերնդից, ըստ օրենքի՝ փարիսեցի, ըստ նախանձախնդրության՝ հալածում էր եկեղեցին, ըստ օրենքի արդարության՝ անբասիր, և աշակերտն էր Գամաղիելի: Այդ ամենը նրան մեծ վստահություն էր ներշնչում իր անձի նկատմամբ: Եվ ահա նա մեծ գործունեություն էր ծավալել՝ իր կարծիքով Աստծո փառքի համար: Նա էր բռնել Ստեփաննոսին քարկոծողների հագուստները, նա Տիրոջը խաչողների մեջ էր նաև, հալածում էր նոր կազմավորվող Եկեղեցին: Եվ այդ բոլորը, ըստ իրեն, անում էր Աստծո փառքի համար:

Բայց երբ Աստված Դամասկոսի ճանապարհին այցելեց նրան, ի զարմանս Սավուղի ասաց. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես Ինձ հալածում»: Իսկ նա զարմացած հարցրեց. «Դու ո՞վ ես, Տե՛ր». այն Աստծուն, Որին իր կարծիքով ծառայում էր նախանձախնդրորեն, պարզվեց, որ երբ նույնիսկ չի ճանաչում:

Եվ երեք օր աչքերը կուրացած մնացին. ինչպես երեխան ինն ամիս արգանդում, որ պատրաստվում է ծնվել, այնպես էլ Պողոսը: Հինը մեռավ, և ծնվեց նորը՝ Քրիստոսով (Փիլիպ. 3, 5-6): Եվ իր անձի վրա վստահ եղողը ամբողջովին մաքրվեց իր անձի առանձնաշնորհների վրա հույս դնելուց և ասաց. «Ես էլ չեմ ապրում, այլ Քրիստոս՝ իմ մեջ»:

Էլ իր վրա վստահություն չուներ, դրա համար էլ ասում է. «Ես ձեզ մտքի ճարտարությամբ չքարոզեցի, այլ՝ Հոգու զորությամբ»: Եվ արդեն ճշմարտացիորեն անմնացորդ Տիրոջը նվիրված իր անձը կենդանի զոհ էր մատուցում իր Տեր Աստծուն՝ ասելով. «Ես բոլոր առաքյալներից շատ աշխատեցի, բայց՝ ոչ թե ես, այլ՝ Աստծո շնորհը, որ իմ մեջ էր, քանի որ ես ոչինչ եմ»:

Ուրեմն զգուշանանք, քանի որ հնարավոր է, որ գիշեր-ցերեկ Տիրոջ համար վազենք, գործենք, բայց Դատաստանի օրն այն Աստծուց, Ում կարծես թե ծառայում էինք և ակնկալում Նրանից լսել երանելի բարբառը. «Ապրե՛ս, բարի ու հավատարի՛մ ծառա», հանկարծ լսենք ահավոր և զարհուրելի խոսքերը. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ էիր Ինձ հալածում»: Եվ

ինչպես Հեսուն Աքարին ասաց, նույնն էլ մենք լսենք.

«Այսօր էլ Աստված քեզ պիտի նեղի»: Քանի որ ասվեց. «Քննե՛ք ձեր անձերը. արդյոք հավատքի մե՞ջ եք», և ինչպես սաղմոսերգուն է խնդրում՝ ասելով. «Տե՛ր, քննի՛ր իմ ճանապարհները և տե՛ս, թե չե՞մ խոտորվել, և ե՛տ դարձրու ինձ դեպի Քո փրկարար ուղին»:

Վա՜յ նրանց, որ թմբիրի մեջ կմնան, և իրենց կթվա, թե արքունության մեջ են, ապրում են հանգիստ, խաղաղ կյանքով և երևակայում, թե Աստծո սիրելիներ են, բայց պարզվում է՝ ավելի վնասակար են, քան Տիրոջ բացահայտ թշնամիները, քանի որ անհավատները կամ այլակրոնները կարող էին միայն սպանել քրիստոնյաներին՝ նրանց մեծ տանջանքների մատնելով, բայց դրանով միայն նրանց համար փառաց պսակներ էին պատրաստում երկնքում: Քանի որ ասվում էր. «Մի՛ վախեցեք նրանցից, ովքեր մարմինն են սպանում»: Բայց այն գաղջ քրիստոնյաները, որոնք իբր թե Աստծուն են ծառայում, բայց առանց Աստծո զորության ավելի մեծ և ահավոր վնաս են հասցնում Տիրոջ Եկեղեցուն, քանի որ գայթակղության մեծ պատճառ են շատերի համար, մանավանդ որ դա կարող է հոտի ավագը լինել, և շատերը գայթակղվելով կշեղվեն Տիրոջ ճանապարհներից, և իրենց հոգիները կորստի կմատնեն:

Հիշենք Դավթին, որի մասին ասվում է, որ. «Դավթի պես ուղիղ մեկը չգտա»: Ահա այս Դավիթը, որ կարգված էր Տիրոջ ժողովրդի վրա, այս մեծ աստվածապաշտ սաղմոսերգուն, Տիրոջ անունով մեծամեծ գործեր անողը և Տիրոջ թշնամիներին ոչնչացնողը և պաշտպանը Իսրայելի ժողովրդի, հանկարծ դարձավ Աստծո թշնամին, Իսրայելի մեջ ավելի մեծ ավեր գործողը, քան Իսրայելի արտաքին թշնամիները:

Երբ նա արդեն ապահովության մեջ էր՝ ազատված Սավուղի հետապնդումներից, արտաքին թշնամիներից, հենց այդ ժամանակ, կարծես թե հոգևոր թմբիրի մեջ լինելով, գործեց ահավոր մեղք. նենգությամբ սպանել տվեց իր իսրայելացի եղբորը և տիրացավ նրա կնոջը: Եվ քանի-քանի մեղքեր գործեց, քանզի ասված էր. «Մի ցանկացիր մերձավորիդ կնոջը», իսկ նա, տեսնելով Բերսաբեին, իր սրտով ցանկացավ նրան: Երկրորդ՝ ասված էր. «Սիրի՛ր քո մերձավորին քո անձի պես», իսկ նա խորհեց սպանել իրեն նվիրված, Աստծո երկյուղը իր սրտի մեջ կրող, Իսրայելի համար իրեն հանգստից և վայելքներից զրկող Ուրիային: Գրված էր. «Մի սպանիր», և նա սպանեց ոչ միայն Ուրիային, այլև շատերին Իսրայելի զորքից՝ իր ցանկություններին բավարարություն տալու համար (Բ Թագ. 11:7): Եվ գրված էր նաև, թե՝ «Աչքեր ստեղծողը չի՞ տեսնում, ականջ տնկողը չի՞ լսում»: Եվ Դավիթը կարծես լրիվ մոռացել էր իր Տեր Աստծուն և փսփսում էր Հովաբի ականջին, որ ոչ ոք չլսի այդ խարդավանքի մասին, որը բացարձակ անհավատության մեղք էր: Դավիթը դրանով նմանվում էր ոչ թե կռապաշտներին, այլ ավելի վատին՝ բացարձակ անհավատի: Եվ ահա այս ահավոր մեղքեր գործողը բնավ չէր զարհուրում իր արածների համար, կարծես ոչինչ էլ չի պատահել, և հանգիստ խղճով ապրում էր:

Եվ այս՝ Գողիաթին Տիրոջ անունով գետին տապալողին, Տիրոջով առյուծ ու արջ սատկեցնողին, այս մեծ սաղմոսերգուին, Տիրոջ տապանակի առջև մերկ պարողին ու երգողին հարկ եղավ Նաթան մարգարեի հատուկ միջամտությունը, որպեսզի սթափվի և հասկանա, որ իր գործած մեղքերի շարանը իրեն կորստյան տանում: Եվ երբ Դավիթը անձնաքննությամբ չզբաղվեց, ստիպված մարգարեն նրան մղեց դրան, և երբ ուրիշ մեկի

անունից իր մեղքը իր առջև դրեց, այնժամ Դավիթը ինքն իր բերանով իրեն դատապարտեց՝ ասելով. «Այդպիսի մեկը մահվան է արժանի»: Եվ երբ Նաթանն ասաց, թե՝ «Դու ես այդ մարդը», Դավթի աչքերը կարծես բացվեցին, և հանկարծ տեսավ և հասկացավ իր գործած մեղքերի ահավոր շարանը և, գետին ընկնելով, ասաց. «Մեղա՜, Աստված, մեղք գործեցի»:

Լավ, մի՞թե այսպիսի աստվածապաշտ, օրենքին գիտակ մեկի համար պարզ չէր, որ իր գործած ահավոր մեղք է, մի՞թե Նաթանը նրան մի կերպ այդ պիտի հասկացներ, այն էլ՝ առակի միջոցով:

Եվ ահա տեսնում ենք, որ նման հզորը կարող է ահավոր ընկնել և չգիտակցել իր ընկած վիճակը: Ո՞ւր մնացինք մենք՝ տկարներս, որ մեզ բաժին են հասել այս «վերջին օրերը», որոնց մասին հատուկ ասված է, թե չար օրեր են:

Եվ ի՞նչ եղավ հետևանքը: Դավթի գործած մեղքի փոխարեն մահացավ անմեղ մանուկը՝ Դավթի որդին՝ հիշեցնելով մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին, քանի որ Նրան էլ շատ հաճախ Դավթի Որդի էին անվանում. այսինքն՝ անմեղ մեկը, որ մահանում է ուրիշ մեկի պատճառով: Նաև Դավթի՝ Իսրայելի հովվի պատճառով Իսրայելի մեջ ահավոր մեծ կոտորած եղավ: Ժանտախտով ավելի, քան թե Իսրայելի արտաքին թշնամիների սրով, երբ նա Աստծո զորությունը իրեն վերագրեց՝ մարդահամար անելով, մեռան շատերը (Բ Թագ. 24, 12):

Տեսնում ենք, որ հոտի՝ թմբիրի մեջ եղող հովիվն ավելի մեծ վնասների պատճառ է, քան արտաքին թշնամիները: Նաև պատճառ էր, որ Դավթի սիրելի որդին՝ Աբիսողոմը, ապստամբի և հալածի Դավթին, ինչպես որ Աստծո սիրելի Դավիթն ապստամբեց Տիրոջ դեմ: Քանի որ Տերն էլ Նաթանի միջոցով կարող էր ասել Դավթին. «Դավի՛թ, Դավի՛թ, ինչո՞ւ ես հալածում ինձ», և քանի որ Տերն ասաց Դավթին, թե՝ «Քո պատճառով Իմ թշնամիները չարախնդացին, ապա դու էլ այս ամենը պիտի կրես և արտաքին թշնամիներից էլ հանգիստ պիտի չունենաս». Դավթի պատճառով Իսրայելը պատերազմներից աչք չպիտի բացեր:

Եվ քանի որ փսփսաց Հովաբի ականջին, կարծես Աստված չի լսում և տեսնում իր գործածները, ապա Դավթի տունը խայտառակ եղավ հայտնապես, երբ Աբիսողոմը Իսրայելի աչքի առջև մերձեցավ իր հոր՝ Դավթի հարճերի հետ:

Եվ եթե Դավիթը չունենար այն զղջացող սիրտը, որով լացակումած, կուրծքը ծեծելով գրեց 51-րդ սաղմոսը. «Ողորմյա՛ ինձ, Աստվա՛ծ, Քո մեծ ողորմության համեմատ և բազում գթությունների համեմատ, քավի՛ր իմ անօրինությունները», ապա կյանքից էլ կզրկվեր, քանի որ ինքն էլ հաստատեց, որ նման մեկը միայն մահվան է արժանի: Բայց Աստված անհուն ողորմությամբ խնայեց Դավթին, բայց հետևանքները շատ ծանր եղան:

Ուրեմն, զարհուրենք, քանի որ նման երանելին կարող էր ընկնել մի ահավոր գուբի մեջ և չզգալ իր անկումը, ուրեմն մենք որքա՜ն առավել կարիք ունենք արքունության, սթափության, անձնաքննության:

Վա՜յ մեզ, եթե մեր արարքները Դատաստանի օրը մեզ ցույց տան և Նաթանի պես չասեն, որ դրանք մերն են. ի՞նչ կասենք մենք: Միգուցե ասենք, թե այդպիսի մեկը երկրորդ մահվա՜ Կրակե լճին է արժանի, և հանկարծ լսենք սարսափելի և ահավոր խոսքեր, թե՝ «Այդ մարդը դու ես»:

Ուրեմն, քանի դեռ ժամանակ ունենք, քննենք մեր անձերը, և այս գիրքը թող մեզ համար լինի մեր մեղքերը մերկացնող Նաթանի պես, որպեսզի մենք էլ Դավթի պես ընկնենք Տիրոջ առջև՝ լացակումած ասելով.

«Ողորմյա ինձ, Աստվա՛ծ, Քո մեծ ողորմության համեմատ», և՝ մաքսավորի պես. «Աստվա՛ծ, ներիր ինձ՝ մեղավորիս», նաև՝ Գրիգոր Նարեկացու պես, թե՝ «Եթե իմ մեղքերը նժարի մի կողմը դնես, իսկ մյուսում՝ Արարատ լեռը, իմ մեղքերն ավելի ծանր կլինեն»: Հիմա ցավ զգանք մեր մեղքերի համար, հիմա տանենք վշտերն ու անձկությունները, հիմա տրտմենք ապաշխարության համար, որ այն ահավոր օրը, հանկարծ մեր իրական դեմքը տեսնելով, չզարհուրենք և, մեջտեղից կտրվելով, անհավատների հետ չդասվենք:

Ուրեմն, առանց վարանելու նայենք և կարդանք այս գրքի խրատներն ու հանդիմանությունները և խորհուրդները, որքան էլ նրանք մեզ ցավ պատճառեն: Ում որ ծանր գա այս գիրքը, և նա ծալելով մի կողմ դնի, կնմանվի Հին Իսրայելին, որ, Մովսեսի դեմքից ճառագող լույսից հանդիմանվելով, ոչ թե այդ լույսի ներքո ջանաց իր աղտեղությունները մաքրել, այլ ավելի հեշտ միջոց գտավ՝ քող գցելով Մովսեսի դեմքին և ծածկելով այդ հանդիմանող լույսը, քանի որ խավարի մեջ թմբիր և հանգստություն կա, մինչդեռ Տիրոջ օրը ոչ թե Մովսեսի լույսը, այլ Աստծո Գառան լույսը պիտի ծագի: Ճիշտ է, այդ լույսը հրեաները նորից ուզեցին ծածկել՝ այս անգամ խաչի միջոցով, որը և մասամբ հաջողվեց իրենց, բայց հեթանոսները լուսավորվեցին և իրենց հեթանոսությունից դարձան կենդանի Աստծուն: Իսկ հրեաները՝ ընդհակառակը. միակ ճշմարիտ Աստծուց ետ դարձան և խոնարհվեցին այս աշխարհի իշխանին՝ խավարի թագավորին, քանի որ սա ոչ մի բանով չէր հանդիմանում նրանց, այլ մի բան էլ ոգևորում և բազում առաջարկներ էր անում, թե՝ ամբողջ աշխարհը ձեզ կտամ:

Ուրեմն, չնմանվենք այս աշխարհի մեջ վայելք փնտրող Հին Իսրայելին, այլ մերժենք հանգիստն ու ապահովությունը, և դա ակնկալենք միայն երկնքում: Զարհուրենք ահավոր դատաստանից և ջանանք ամեն կերպ պատրաստվել այդ օրվան, այլ ոչ թե ջայլամի պես գլուխներս մտցնենք ավազի մեջ՝ ասելով. «Ոչ մի վտանգ էլ չկա, քանի որ մենք Աստծո ողորմությանն ենք հուսացել»: Իսկ դատաստանի օրը կտեսնենք, որ անթիվ անհամար ժողովուրդներ, Աստծո արդարությունից սարսելով, գիշեր-ցերեկ ջանացել են Տիրոջ շնորհով մաքրել իրենց սրտերը, շտկել իրենց ճանապարհները և Աստծո ողորմությամբ արժանացել հարսանյաց հանդերձներին, իսկ մենք՝ անհոգներս և միայն Աստծո ողորմությանը հուսացողներս, կարող ենք արժանանալ հետևյալ հարցմանը. «Բարեկա՛մ, եթե հանդերձ չունեիր, ինչո՞ւ մտար», քանի որ ասվում է. «Զգո՛ւյշ եղեք, որ հագնվելու ժամանակ մերկ չգտնվեք»:

Եվ այսպես, տա Աստված, որ շատերիս համար այս գիրքը դառնա սթափության, արթնության պատճառ, որպեսզի ոչ թե մեր անձի փուչ և ունայն գործերով, այլ «Հոգով և ճշմարտությամբ» փառավորենք մեր Տեր Աստծուն:

Սողոմոնն էլ՝ Տիրոջը նվիրված իմաստունը, գլորվեց իր թմբիրի պատճառով և աստվածպաշտության բարձունքներից ընկավ կռապաշտության անդունդը: Եվ ինչպես ասում է Գրիգոր Նարեկացին Սողոմոնի մասին. «Երբեմն որդի, հետո ատելի, Նա, որ երբեմն օրենքն էր կենաց, հետո վերածվեց մահվան մուրհակի»: Նրա իմաստությունը լսելու համար աշխարհի բոլոր ծայրերից էին գալիս, իսկ Սաբայի թագուհին երանի տվեց նրա ծառաներին, քանի որ միշտ լսում են նրան: Բայց, ի զարմանս մեզ, այդ իմաստությունն իսկ բավարար չեղավ հաստատուն մնալու: Ուրեմն, մենք որքա՞ն կարիք ունենք գիշեր ու զօր արթնության համար աղոթելու Տիրոջը, ջանալով սթափության մեջ

հաստատվել:

Եվ շարունակում է Նարեկացին՝ ասելով. «Զարմանում եմ ու վիատվում՝ ապշած տարակուսանքով, քանզի եթե նա այնքան սայթաքեց, հապա ի՞նչ պիտի պատահի ինձ հետ: Բարձրացրածն ինչպե՞ս ընկավ վայրապար, ամուր հաստատվածն ինչպե՞ս սասանվեց, ինչպե՞ս կործանվեց կանգնածն անհողդողդ, ճանաչվածն ինչպե՞ս հանկարծ խորթացավ, ընտրյալ զավակը ինչպե՞ս մոլորվեց, մերձավորն ինչպե՞ս թողեց հեռացավ, ճաճանչափայլը ինչպե՞ս մթագնեց, ազատվածն ինչպե՞ս տրվեց պատանդի, ուսուցիչն ինչպե՞ս անօրինացավ, հռչակվածն ինչպե՞ս վայելչազրկվեց, ինչպե՞ս անարգվեց փառավորն հանկարծ, ինչպե՞ս փոքրացավ մեծատունը պերճ, բարեպաշտն ինչպե՞ս ամբարշտացավ, ընտրողը ինչպե՞ս ամբարգավաճեց, կատարելությունն ինչպե՞ս սնացավ, ինչպե՞ս խզեց ուխտն իր՝ Բարձրյալի հետ. ամաչում եմ ես ասել՝ մինչևիսկ դժոխապետի հետ մտերմացավ:

***

Կինը, որ որսաց դեռ նախահորն ու մատնեց կորստյան, տարավ և սրա բարեբաստության երաշխիքը ողջ: Փառամոլությունը հաղթեց գերապանծ իր իմաստությանը, գոռոզությունը գերեց լիովին, հեշտասիրությունն հիմարացրեց, իշխեց արծաթը ստրկացնող, կործանարարի զենքը վաղեմի հոգով սպանեց տոնելի մարդուն և նրան Աստծո գրկից հանելով՝ ստամբակի պիղծ ոտքի տակ նետեց, մեղկությունը ցոփ մեռցրեց նրան, պղերգությունը ընդարմացրեց, շվայտությունն արբեցրեց իսպառ:

Ո՜վ դյուրապատիր մարմին երկրածին, ի՞նչ ողբուկոծով ավաղեմ ես քեզ. քանզի հատուկ է հակասությունն այս ոչ միայն նրան, այլև շատերին, որոնք սխալվում և խոտորվում են ինքնակամորեն:

***

Սողոմոնն ունի իր դարձի մասին հույժ քստմնելի և ինքնապարսավ կշտամբանքներով հիշատակարան, որպես մի մարդ, որն ինքնասիրության աշխարհն համորեն մեռցրել է իր մեջ:

***

Ուստի ես էլ եմ աղերսում ահա մեծ վստահությամբ՝ նրա պես ողբիս աղաղակները քեզ ընծայելով. եթե դատելով ըստ մեր գործերի՝ կորցնես մեզ, փառքդ չի խամրի բնավ, քանի որ արդար վարված կլինես, բայց եթե գտնես՝ կբարձրանաս, Տե՜ր, որքան վայել է լոկ Քո մեծության, զի Դու ավելի ողորմությամբ ես օրհնաբանելի, քան թե սաստկությամբ նախահրաման: Դարձի՛ր, Տե՜ր, դարձի՛ր քո խնամարկու քաղցր գթությամբ ու ամենառատ՝ սիրուդ պարգևով մխիթարի՛ր մեզ, որ համանման անբժշկելի վիշտ ու տագնապի տապով տոչորված՝ տրտմել ենք հավետ. փրկարար ձեռքդ դնելով՝ կրկին քավի՛ր ու խորտակումներից այս մեղսակործան: Սկզբիդ միակ և անսկզբիդ հետի սկզբիդ և սկզբների սկզբնավորիդ, Սուրբ Երրորդությանդ՝ մեկ Աստվածությամբ՝ իշխանությո՜ւն, փա՜ռք հավիտյաններից հավիտյանս. ամեն»:

ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

*Որդիներ՛ր, լսեք բերանի մասին այս **խրատը**. ով որ պահի այն, չի որսվի: Մեղավորն իր շուրթերով է որսվում, և հայհոյիչն ու ամբարտավանը դրանցով են սայթաքում (Սիրաք 23:7):*

*Տեր Աստված ինձ **խրատող** լեզու տվեց, որ կարողանամ ճիշտ ժամանակին խոսք ասել (Եսայի 50:4):*

Աստվածաշնչից

1. Սակայն Տերն Իր սուրբ տաճարում է. Լռի՛ր Նրա առջև, ո՛վ բոլոր երկիր (Ամբ. 2:20):

2. Տիրոջ առջև լուռ մնա, ո՛վ մարմին, քանի որ Իր սուրբ բնակարանից արթնացավ (Զաքար. 2:13):

3. Երանի թե բոլորովին լռեիք, և դա ձեզ իմաստություն կհամարվեր (Հոբ 13:5):

4. Ասացի՝ ճամփաներիս զգուշություն անեմ, որպեսզի լեզվով մեղք չգործեմ (Սաղմոս 38:1-2):

5. Ես ասացի՝ վայ ինձ, որովհետև կորած եմ, քանի որ ես պիղծ շրթունքներով մարդ եմ (Եսայի 9:5):

6. Թող քո բերանը չշտապի, և ոչ էլ սիրտդ հապճեպ խոսք ասի Աստծու առջև, որովհետև Աստված երկնքում է, իսկ դու՝ երկրի վրա. դրա համար էլ թող քո խոսքերը սակավ լինեն (Ժողով. 5:1):

7. Մի թույլ տուր, որ բերանդ մարմնիդ դրդի մեղքեր գործելու, և Աստծու առջև մի՛ ասա, թե անգիտությունից էր, որպեսզի խոսքիդ համար Աստված չբարկանա և չավերի ձեռքիդ գործերը, որովհետև, ինչպես երազների առատության, այնպես էլ խոսքերի շատության մեջ ևս ունայնություն կա, և դու վախեցի՛ր Աստծուց (Ժող. 5:5-6):

8. Շատախոսության մեջ հանցանքը պակաս չի լինի, բայց իր շրթունքները զսպողը խելացի է (Առակ.10:19):

9. Զզվելի են Տիրոջ համար ստախոս շրթունքները (Առակ. 12:22):

10. Իր բերանը զսպողը փրկում է իր հոգին. իր շրթունքները լայն բաց անողը կործանում է իրեն (Առակ. 13:3):

11.Ամեն աշխատության մեջ շահ կա, բայց դատարկաբանությունը միայն դեպի աղքատության է տանում (Առակ. 14:23):

12. Բուժող լեզուն Կենաց ծառ է. բայց լեզվի նենգությունը հոգու վերք է (Առակ. 15:4):

13. Մեղրի խորիսխ է վայելուչ խոսքը, քաղցր է հոգուն և բժշկություն՝ ոսկորներին (Առակ. 16:24):

14. Իր խոսքերը զսպողը գիտություն գիտի, և ծանրաբարո մարդը խոհեմ է (Առակ. 17:27):

15. Հիմարն էլ լռելով իմաստուն կհամարվի, և իր շրթունքը փակողը՝ հանճարեղ է (Առակ 17:28):

16. Ով որ բան չլսած պատասխան տա, սա նրա համար հիմարություն է և ամոթ (Առակ. 18:13):

17. Մահն ու կյանքը լեզվի ձեռքին են (Առակ. 18:21):

18. Հիմար շրթունքները կռվի մեջ են մտնում (Առակ. 18:6):

19. Ով որ զսպի իր բերանն ու լեզուն, իր հոգին նեղությունից կպահի (Առակ. 21:23):

20. Հիմարի բերանը կործանում է իր համար և նրա շրթունքները՝ որոգայթ իր անձի համար (Առակ. 18:7):

21. Շրթունքը լայն բացողի հետ մի հաղորդակցվիր (Առակ. 21:23):

22. Մի պատասխանիր հիմարին նրա տխմարության համեմատ, միգուցե դու էլ նրան նմանվես (Առակ. 26:4):

23. Իր խոսքերի մեջ շտապող մա՞րդ տեսար. հիմարից ավելի հույս կա, քան նրանից (Առակ. 29:20):

24. Երանի այն մարդուն, որ չի մեղանչել իր շուրթերով և խոցված չէ մեղքի հարուցած տրտմությամբ: Երանի այն մարդուն, որին չի տանջում իր խիղճը, և որը չի կորցրել իր հույսը (Սիրաք 14:1-2):

25. Իմաստուն մարդը լռում է մինչև խոսելու պահը, բայց ով անզգամ և ամբարիշտ է, առաջ է վազում: Ով շատախոսում է՝ կարհամարհվի, և ով անչափ սաստում է իր խոսքով՝ ատելի կլինի (Սիրաք 20:7-8):

26. Ո՞վ ինձ կտա պահապան՝ իմ բերանի վրա և խորագիտության կնիք՝ իմ շուրթերին, որպեսզի չխորտակվեմ, և իմ լեզուն չկործանի ինձ (Սիրաք 22:33):

27. Հիմարների սիրտը իրենց բերանում է, իսկ իմաստունների բերանը՝ իրենց սրտում (Սիրաք 21:29):

28. Շատերն են ընկել սուսերի սայրից, բայց ոչ նրանց չափ, որ ընկել են լեզվի երեսից (Սիրաք 28:22):

29. Եթե երիտասարդ ես, խոսի՛ր, եթե քեզ պետք է, հազիվ մեկ երկու-խոսք ասա, եթե հարցնեն: Ասա գլխավորը, քիչ խոսքով՝ շատը: Եղիր նրա նման, ով իմաստուն է, բայց լուռ է մնում: Մեծամեծերին մի՛ հավասարվիր, և ուր նրանք խոսում են, մի՛ շաղակրատիր (Սիրաք 35:10-13):

30. Մի՛ ընտելացրու քո բերանը երդումի: Մի՛ վարժվիր սրբի անունով երդվել (Սիրաք 23: 9-10):

31. Ասում եմ ձեզ, թե ամեն դատարկ խոսքի համար, որ մարդիկ խոսեն, դատաստանի օրը պատասխան պիտի տան (Մատթ. 12:36):

32. Եսային լավ մարգարեացավ ձեր՝ կեղծավորներիդ վրա, ինչպես գրված է. «Այս ժողովուրդը շրթունքով է պատվում Ինձ, իսկ նրա սիրտը Ինձանից հեռացած, զատված է, և իզուր տեղն են պաշտում Ինձ» (Մարկ. 7:6):

33. Ոչ մի անվայել խոսք թող դուրս չգա ձեր բերանից. բայց միայն այն որ բարի է՝ շինության համար հարկավոր, որ շնորհք տա լսողներին (Եփես. 4:29):

34. Այժմ դուք ևս թոթափեցեք այդ բոլորը՝ ...հայհոյությունը և խեղկատակությունը ձեր բերանից: Մի ստեք միմյանց. հանեցեք ձեր վրայից հին մարդուն՝ իր բոլոր գործերով (Կողոս. 3:8-9):

35. Պիղծ ունայնաբանություններից ետ քաշվիր (Ա Տիմ. 6:20):

36. Այս բաները հիշեցրու նրանց՝ վկայություն տալով Աստծո առաջ, որ բանակռիվներ չմղեն, որոնք ոչ մի բանի օգտակար չեն, այլ

կործանում են լսողներին (Բ Տիմ. 2:14):

37. Իմ սիրելի եղբայրներ, իմացեք այս բանը, թող ամեն մարդ արագ լինի լսելու մեջ, ծանր՝ խոսելու մեջ (Հակ. 1:11):

38. Եթե ձեզանից մեկը կարծում է, թե բարեպաշտ է և իր լեզուն չի սանձում ... այդպիսի մեկի համար զուր է բարեպաշտությունը (Հակ. 1:26):

39. Եղբայրնե՛ր իմ, շատերդ ուսուցանողներ լինելու չձգտեք: Իմացե՛ք, որ մեծ դատաստան ենք ընդունելու, քանի որ բոլորս էլ շատ ենք մեղանչում: Եթե մեկը խոսքով չի մեղանչում, նա կատարյալ մարդ է՝ ընդունակ սանձահարելու իր ամբողջ մարմինը (Հակ. 3:1-2):

40. Լեզուն էլ կրակ է, մի աշխարհ՝ անիրավության. մեր անդամների մեջ այնպես է հաստատված լեզուն, որ ապականում է ամբողջ մարմինը և կրակով վառում մեր ամբողջ կյանքը, բորբոքված գեհենի կրակով: Գազանների, թռչունների և սողունների ամեն տեսակ, և ինչ որ կա ծովի մեջ, հնազանդված է և հնազանդվում է մարդկային բնությանը, բայց մարդկանց լեզուն՝ այդ չարը, անզսպելին և մահաբեր թույնով լցվածը, ոչ ոք չի կարող հնազանդեցնել: Նրանով օրհնում ենք Տիրոջը և Հորը և նրանով անիծում ենք մարդկանց, որ ստեղծվեցին Աստծու նմանությամբ: Նույն բերանից դուրս են գալիս օրհնություններ և անեծքներ: Եղբայրնե՛ր իմ, պետք չէ, որ այդ այդպես լինի: Մի՞թե մի աղբյուր նույն ակից քաղցր և դառը ջուր կբխեցնի (Հակ. 3:6-8):

41. Չարի փոխարեն չար չհատուցեք, կամ բամբասանքի փոխարեն՝ բամբասանք. այլ ընդհակառակը՝ օրհնեցեք (Ա Պետ. 3:8):

42. Ով ուզում է կյանքը սիրել և լավ օրեր տեսնել, թող լռեցնի իր լեզուն չար բաներ ասելուց և իր շրթունքները՝ նենգություն խոսելուց (Ա Պետ. 3:10):

43. Որդյակներ, չսիրենք խոսքով և ոչ էլ լեզվով, այլ գործով և ճշմարտությամբ (Ա Հովհ. 3:18):

Հայրեր

1. Լեզվիդ պահպանություն արա ու մի բազմապատկիր խոսքերդ: Ով խոսքերն է բազմապատկում, նա չի կարող մեղքից զերծ մնալ (Անտոն Անապատական):

2. Շատախոսությունը կհեռացնի քեզանից Աստծո Հոգին (Անտոն Անապատական):

3. Բարկացած մի խոսիր, ձայնդ մի բարձրացրու, մի ճչա ու մի խոսիր արագարագ (Անտոն Անապատական):

4. Շրթունքներդ թող միշտ ճշմարտությունն ասեն (Անտոն Անապատական):

5. Բարի գործերի մասին, որ ուզում ես կատարել, երբեք մի ասա, կատարիր այն՝ նախապես չխոսելով դրա մասին (Անտոն Անապատական):

6. Մի բազմապատկիր խոսքերդ, շատախոսությունը հեռացնում է քեզ Աստծուց (Անտոն Անապատական):

7. Իմաստուն եղիր, լռությամբ փակիր քեզ զրպարտողի բերանը (Անտոն Անապատական):

8. Չար զրույցների սովորությունը ճանապարհ է չար գործերի (Անտոն Անապատական):

9. Լռիր, երբ տեսնում ես, որ խոսքերիդ ուշադրություն չեն դարձնում (Անտոն Անապատական):

10. Լռությունը մեր Տիրոջ ընդօրինակումն է (Անտոն Անապատական):

11.Երբ ճանապարհորդում ես եղբայրների հետ, մի փոքր առանձնացիր նրանցից, որպեսզի պահպանես լռությունը (Անտոն Անապատական):

12. Փախիր լեզվի պատերազմից (Անտոն Անապատական):

13. Երբ նստած ես եղբայրների հետ, շատ մի խոսիր, իսկ երբ նրանց ինչ որ բան ես ուզում հարցնել, ապա հարցրու կարճ և խոնարհաբար (Անտոն Անապատական):

14. Քո խոսակցության առարկան միշտ թող լինեն Աստծո բարերարությունները, դրանով դու Նրա կողմից կարժանանաս ավելի մեծ օրհնությունների (Անտոն Անապատական):

15. Եկեղեցում էլ երբեք չխոսես (Անտոն Անապատական):

16. Բարի խոսքը արծաթ է, իսկ լռությունը՝ ոսկի (Եփրեմ Ասորի):

17.Վախեցիր դատարկախոսությունից, ինչպես կվախենաս վայրի գազաններից ու գիշատիչ թռչուններից: Քանզի վերջիններիս նման այն ոչնչացնում է սուրբ կյանքի արդյունքները (Եփրեմ Ասորի):

18. Այգին առանց ցանկապատի ոտնատակ կլինի ու կամայանա: Եվ ով որ իր շրթունքները չպահի, կոչնչացնի առաքինության պտուղները (Եփրեմ Ասորի):

19. Լավ է քնել, քան թե ժամանակն անցկացնել դատարկախոսությամբ (Եվագր Պոնտացի):

20. Սովորեցրու լեզվիդ խոսել այն, ինչ սրտումդ է (Հայր Պիմեն):

21. Եթե մարդ հիշի Ս. Գրքի խրատը. «Քո խոսքով կարդարանաս և քո խոսքով կդատապարտվես», ապա կգերադասի լռել (Հայր Պիմեն):

22. Կան մարդիկ, որոնք կարծես թե լռում են, բայց սրտում դատում են մյուսներին: Այդպիսիները շատախոսներ են: Իսկ ոմանք առավոտից մինչև երեկո խոսում են, բայց իրականում լռում են, որովհետև ոչ մի բան առանց օգուտի չեն ասում (Հայր Պիմեն):

23. Ինչ դժվարության մեջ էլ որ ընկնես, հաղթանակն այնտեղ լռությունն է (Հայր Պիմեն):

24. Լեզուն մարդու ամենաօրհնված և ամենավնասակար անդամն է, քանի որ միայն մեկ հատիկ խոնարհ խոսքը կարող է մեղմել բարկությունը, իսկ կոպիտը՝ կատաղության հասցնել (Մակար Մեծ):

25. Չար խոսքը նույնիսկ բարիներին է չարացնում, իսկ բարի խոսքը չարերին էլ է բարիացնում (Մակար Մեծ):

26. Պահիր լեզուդ, քանի որ հաճախ արտաբերում է այն, ինչ ավելի լավ կլիներ թաքցնել (Նեղոս Սինայեցի):

27. Ով փախչում է մեղավորին չարախոսող լեզվից, ինքը նույնպես կխուսափի չարախոսության ախտից (Նեղոս Սինայեցի):

28. Աստծո հետ շատ խոսիր, մարդկանց հետ՝ քիչ (Նեղոս Սինայեցի):

29. Լռությունը հոգու մաքրման սկիզբն է (Բարսեղ Կեսարացի):

30. Ավելի լավ է քո մասին վատը լսես, քան՝ վատը խոսես ուրիշի մասին (Գրիգոր Աստվածաբան):

31. Սովորաբար նրանք են լավ խոսում, ովքեր ավելի քիչ են խոսում (Գրիգոր Աստվածաբան):

32. Ավելի լավ է շատ լսես, քան խոսես: Շատախոսության պատճառով մեղքից չես խուսափի (Գրիգոր Աստվածաբան):

33. Խոսիր այն ժամանակ, երբ լռությունը տհաճ է (Գրիգոր Աստվածաբան):

34. Որտեղ առատ են խոսքերը, այնտեղ սովորաբար շատ են նաև մեղքերը (Գրիգոր Աստվածաբան):

35. Ծանր է, երբ շրթունքների վրա սրբություն է, իսկ սրտում անօրենություն է և չարություն (Աբբա Եսայի):

36. Սուրբ մարդիկ սովորաբար սուրբ բաներից են խոսում (Աբբա Եսայի):

37. Սիրիր ավելի լռել, քան խոսել. լռությունից միտքը կենտրոնանում է ինքն իր մեջ, իսկ շատախոսությունից այն ցրվում է (Աբբա Եսայի):

38. Լեզվի զսպվածությունը մարդու իմաստության նշան է (Աբբա Եսայի):

39. Գերադասիր լռել, քան՝ խոսել: Քանզի լռելը հավաքում է, իսկ շատախոսությունը՝ շռայլում (Աբբա Եսայի):

41. Իմաստությունն այն չէ, որ խոսես, այլ որ իմանաս՝ երբ խոսես (Աբբա Եսայի):

42. Լեզվի սանձերը թուլացնողը ցույց է տալիս, որ ինքը հեռու է առաքինություններից (Աբբա Եսայի):

42. Եթե մեկն սկսի քեզ հետ անօգուտ բաների մասին խոսել,

աշխատիր չլսել նրան, որպեսզի չվնասես հոգիդ: Վատ մի զգա, եթե նա վիրավորվի: Թույլ մի տուր, որ նա խոսքը շարունակի, ասա նրան. «Անձն իմ չի կարող տանել քո խոսքերը: Դադարիր այդ մասին խոսել, խնդրում եմ քեզ: Ես հին մարդուց ավելի ամուր չեմ, որին Աստված Իր ձեռքերով ստեղծեց, բայց նա չար զրույցով խաբվեց»: Փախիր հոգեվնաս զրույցներից, մի ցանկացիր ունկնդրել: Տես, եթե փախչում ես մարմնապես, ապա գաղտնապես էլ մի ցանկացիր իմանալ, թե ինչ էր ուզում ասել: Փախիր այնպես, որ իսկույն ևեթ մոռանաս այն ամենը, ինչը հասցրել էիր լսել: Եթե լսածներիցդ գեթ մի բան թույլ տաս հիշողությանդ մեջ մնա, այնժամ դևերը չեն կորցնի ընծեռված հնարավորությունը և կխոցեն քեզ:
(Աբբա Եսայի):

43. Եթե իմ լռելը ձեզ օգուտ չի բերում, իմ խոսքերը նույնպես անօգուտ կլինեն (Հայր Պամբո):

44. Խոսելուց հետո ես հաճախ եմ զղջացել, բայց լռելուց՝ երբեք (Հայր Արսեն):

45. Տեսա շատերին, որոնք իրենց խոսքերի պատճառով ընկել են մեղքի մեջ, բայց լռելու պատճառով՝ գրեթե ոչ ոքի (Ամբրոսիոս):

46. Ինչպես բաղնիքում, երբ հաճախ են դռները բացվում, և գոլորշին դուրս է գալիս, այնպես էլ հոգին է, երբ մարդը ցանկանում է հաճախ խոսել, թեև բարի բան խոսելիս լինի, կորցնում է սեփական ջերմությունը՝ լեզվի դռների միջոցով: Գերադասելի է լռությունը՝ իմաստնագույն մտքերի մայրը (Աբբա Դիադոխ):

47. Պետք չէ վարդապետել ժամանակից շուտ, թե չէ ամբողջ կյանքում թերի կմնաս գիտությունից (Դիոնիսիոս Արիսպագացի):

48. Լռությունը իմաստնության պարիսպն է (Պետրոս Դամասկեցի):

49. Ճշմարտապես պահիր քեզ, որպեսզի քեզ համար մեծ ճգնություն և ժուժկալություն լինի հանապազ լուռ լինելը և չխոսել անգամ ամենափոքր բանի համար: Բայց եթե հարկավոր է խոսել, նախ փորձիր, Աստծո կամքն է լռե՞լը, թե՞ խոսելը: Եվ այսպես խոստովանի՛ր պատճառն Աստծո առաջ, թե՝ չեմ կամենում ըստ իմ կամքի կամ հեշտության խոսել, բայց գիտեմ, թե հիմա Աստծո կամքն ավելի խոսելն է, քան լռելը: Եվ ապա բանալ բերանն Աստծո խոսքով և խոսել, ինչպես վայել է Աստծո առաջ, երկյուղով, ահով, կատարյալ նվաստախոհությամբ և հեզությամբ: Եվ միշտ հեզ և խոնարհ բարք ունենալ՝ պատվելով բոլորին և հնազանդվելով նրանց:

Ճշմարտապես պահիր քեզ, որպեսզի այդպես պատահես մեկին, մեկ կամ երկու բան խոսես սիրո մասին և լռես: Եվ եթե նա քննի քեզ, պատասխանի՛ր նրան միայն այն, ինչ պետք է: Եթե վարդապետության մասին է խոսքը, որքան կարող ես, պահի՛ր քեզ, թե՝ տգետ եմ և անարժան, ապա բռնությամբ հազիվ խոսիր մի փոքր: Եվ այսպես, քննի՛ր քեզ առավոտյան ու երեկոյան և կարգ սահմանելով՝ շտկվիր: Եվ եթե գտնես, որ խոսեցիր ավելի, քան պետք էր, և ասացիր մեկին, թե ինչպես, ինչու կամ ինչ է այս բանը, աղոթի՛ր առ Տեր՝ հեծծելով և հառաչելով Նրա առաջ, և այսպես քեզ պատկերիր (Հայր Սրապիոն):

50. Հարց. -Հայր իմ, դու ասացիր, որ լռությունն ամեն դեպքում լավ է: Սակայն ինչ սկսել եմ այդպես վարվել, ինձ թվում է, թե ես ուղղակի ամոթխածությունից շփոթմունքս թաքցնելու համար եմ լռում և ավելի

շատ վնասներ եմ կրում: Ո՞րն է ճիշտ:

Պատ. -Եթե դու լռում ես հանուն ճգնության, դա լավ է: Իսկ եթե լռում ես այլ պատրվակով, օրինակ, շփոթմունքդ թաքցնելու համար, ապա այս լռությունը վնասակար է (Բարսիլիսկոս Մեծ):

51. Հարց. - Ով սկսի չարախոսել դիմացինին, սակայն կեսից սթափվի, ի՞նչ պետք է անի:

Պատ. -Ով սկսի չարախոսել և սթափվի, պետք է անհապաղ դադարեցնի և փոխի զրույցի թեման: Խոսի հոգևոր բաներից: Սակայն այս զրույցն էլ թող չերկարացնի, որպեսզի շատախոսության պատճառով նորից չգործի չարախոսության մեղքը (Բարսիլիսկոս Մեծ):

52. Հարց. -Եթե ես չեմ ուզում եկեղեցում զրույցի բռնվել, սակայն որոշ վանականներ մոտենան ու ցանկանան զրուցել, ինչպե՞ս վարվել, որպեսզի իմ լռությունից չգայթակղվեն, չմտածեն, թե արհամարհում եմ իրենց:

Պատ. -Եթե նրանք սկսեն խոսել, պատասխանիր կարճ և կոնկրետ, և սա էլ ընդունիր ոչ այլ կերպ, քան որպես դատապարտություն (սեփական անձի) (Բարսիլիսկոս Մեծ):

53. Հարց. -Եթե այնպիսի զրույց է ընթանում, որը հոգեվնաս չէ, ինչպե՞ս վարվել. լռե՞լ, թե՞ մասնակցել:

Պատ. -Քանի դեռ քեզ հարց չեն տվել, լուռ մնա: Բայց եթե քեզ դիմեն, ապա խոնարհությամբ ու Աստծու երկյուղով պատասխանիր, ինչ գիտես: Մի գոռոզացիր, եթե քո ասածն ընդունեն, և ոչ էլ վշտացիր, եթե համամիտ չլինեն: Ուրեմն, դա է Աստծու կամքը: Եվ որպեսզի քեզ լռակյաց էլ չհամարեն, ասա՝ ինչ գիտես, սակայն՝ շատ սեղմ: Եվ սույնով կազատվես շատախոսությունից և ունայնամտությունից (Բարսիլիսկոս Մեծ):

54. Հարց. -Եթե այնպես պատահի, որ հայտնվեմ աշխարհիկ մարդկանց շրջապատում, իսկ նրանք սկսեն ունայնաբանել, ինչպե՞ս վարվեմ. մնա՞մ, թե՞ հեռանամ:

Պատ. -Եթե պատրաստված չես մնալու, ապա հեռացիր: Իսկ եթե հարմար պահ գտնես, մտքում աղոթիր նրանց համար, ոչ թե դատապարտելով նրանց, այլ քո տկարությունը գիտակցելով (Բարսիլիսկոս Մեծ):

55. Որքան միտքդ հեռանում է շատախոսությունից, այնքան պայծառանում է՝ իր մեջ ծագած խորհուրդները տարբերելու համար: Նույնիսկ շատ զորավոր խելք ունեցողները շատախոսության պատճառով կորցնում են այս կարևոր հատկությունը (Իսահակ Ասորի):

56. Հարկավոր է, որ խոսքդ խրատական լինի, որպեսզի թողնես լռությունդ (Աբբա Փաղաքիա):

57. Չարախոս հոգին եռաժանիք լեզու ունի, նախ ինքն իրեն է վնասում, հետո՝ լսողին, այնուհետև նրան, ում մասին չարախոսում է (Աբբա Փաղաքիա):

58. Միայն հոգևոր զրույցն է օգտակար ու գերադասելի լռությունից (Աբբա Փաղաքիա):

59. Պահիր լեզուդ, քանի որ կարող է կարճ ժամանակամիջոցում ցիրուցան անել բազում ջանքերիդ պտուղները (Հովհաննես Սանդուղք):

60. Ինչպե՞ս սանձել լեզուն: Առանձնությունը լեզուն սանձելու միջոց է («Հազար հարց» գրքից):

61. Պահի՛ր լեզուդ, երբ խորապես վիրավորված ես և կկանխես խռովությունն ու թշնամությունը («Վանական ուսմունք» գրքից):

62. Շրթունքները փակվում են մահվան հիշողությամբ, որ շատ կարևոր է և գնահատելի, քանի որ շատախոսությունը խլում է մարդուց հավիտենականության մասին միտքը («Վանական ուսմունք» գրքից):

63. Հոգով ու մարմնով ունայնախոսությանն ու զվարճությանը տրվողը շնացող է: Մարդահաճությունից դրդված դրանց մեջ գտնվողը կռապաշտ է (Հոգեշահ գրքերից):

64. Երանի թե շատ հաճախ լուռ մնացած և մարդկանց ընկերակցությունից խուսափած լինեի (Թովմաս Գեմբացի):

65. Եթե թույլ է տրվում և կարելի է խոսել, խոսիր օգտակար նյութերի մասին:

Եթե զրույցը հոգևորի շուրջն է, այն էլ՝ Աստծո կամքին հետամուտ և նույն երազանքով տոգորված մարդկանց հետ, շատ օգտակար է, քանզի մղում է կատարելության (Թովմաս Գեմբացի):

66. Ով որ հոգևոր կյանքով ապրելու ցանկություն ունի, պիտի Հիսուսի պես հեռանա ամբոխից:

Ոչ ոք զերծ չէ վտանգից, եթե չի սիրում մեկուսացումը: Ոչ ոք չի կարող չափավոր խոսել, եթե չգիտի կամովին լռել (Թովմաս Գեմբացի):

67. Եթե գիտես լուռ մնալ և համբերել, անկասկած Աստված քեզ պիտի օգնի (Թովմաս Գեմբացի):

68. Երբ առիթ է լինում գիտելիքներդ ցույց տալու, լռիր: Չգիտե՞ս ճշմարտությունն Աստծու Որդու մասին, Ում պետք է միշտ ընդօրինակել: Որովհետև Նա խոսում էր ոչ թե Իրենից, այլ ասում էր այն, ինչ Աստված է տալիս յուրաքանչյուրի օգուտի համար: Թող Աստված պահպանի քեզ և զորություն տա՝ ամեն պատեհ առիթով ողջախոհությամբ լռել կարողանալու, և օրհնի քեզ, եթե հարկադրված լինես խոսել: Եվ թող ոչ մի կիրք չարթնանա հոգումդ: Քանզի սիրտդ դեռևս անտեղյակ է, որ շատախոսությունը պղծում է մարդուն, այլապես թույլ չէր տա հաճույք ստանալ շաղակրատանքից (Թովմաս Գեմբացի):

69. Կա մի ուրիշ տեսակի և շատ սոսկալի մարդասպանություն, որը կատարվում է լեզվով. այս տեսակի մարդասպաններն իրենց ընկերներին են բամբասում, նախատում և զրպարտում, որոնց համար Դավիթ մարգարեն ասում է. «Իրենց լեզուները օձի պես սրեցին, իժի թույն կա նրանց շրթունքների տակ» (Սաղմ. 139:3): Վա՜յ այն մարդուն, որի դեմ կշարժվեն այս տեսակ թունալից լեզուներ, նա օրհասական վերք ստացող մեկի պես պիտի գալարվի, նրա աչքերը արցունքի և սիրտը վշտերի մեջ պիտի լողան. նա՝ այդ թունալի լեզուն, մահացու ցավերը միշտ կրել է տալիս, բայց չի սպանում միանգամից, այլ տևական տառապանքների է մատնում իր զոհին (Տեր Գաբրիել քահանա):

70. Սուրբ գրվածքների գիտությունն ու մխիթարությունն անտեսողները հաճախ ընկնում են բամբասանքի մեջ, որովհետև ոչ հոգևոր ճշմարտությունից խոսել գիտեն, ոչ էլ որևէ օգտակար մի բանից: Ամենքին անխտիր բամբասում են, որպեսզի ժամանակ անցկացնեն: Եթե նրանց մեջ գտնվի գրագետ և իմաստուն մեկը և սուրբգրային ինչ-որ բան ասի, ապա շուտ ձանձրանում են, դատում են՝ քթի տակ ծիծաղելով, խոսքը շուռ են տալիս և

լռեցնում: Ուրախանում են, երբ ոմանք հանդգնում են ասել, թե բավական է, որքան վարդապետություն արեցիր, սպասիր ուրիշներն էլ խոսեն:

Եվ զարմանալու բան չկա, ովքեր սովոր են հաճույք ստանալ աղբի գարշահոտությունից, նրանք զզվում և խորշում են ծաղկի անուշահոտ բուրմունքից (Պողոս Պատրիարք):

71. Չկա ավելի իրավացի բամբասանք, քան երբ մեկը մտքում բամբասում է ինքն իրեն, որով և ազատվում է ընկերներին չարաչար բամբասելուց: Երբ կարողանում ես տեսնել քո թերությունները, ուրիշներինն այնքան էլ չի երևում (Պողոս Պատրիարք):

72. Գավազանի հարվածն այնքան չի ցավեցնում մարդուն, որքան լեզվի հարվածը: Թեկուզ լեզուն ոսկոր չունի, բայց ոսկոր է փշրում: Ինչպես որ կրակը ոչնչացնում է փայտը, այնպես էլ բամբասողի լեզուն՝ անմեղի ոսկորները: Ավելի շատ պետք է զգուշանալ խայթող լեզվից, քան կատաղի շան ժանիքներից (Պողոս Պատրիարք):

73. Եթե այն ամենը, ինչ խոսում է լեզուն, ձեռքը կատարի, շուտով նրա մատները կկոտրատվեն: Քանի որ լեզուն ոսկոր չունի, ինչքան որ կամենա՝ կխոսի և անվնաս կմնա, բայց ձեռքը, որ ոսկորներից է կազմված, երբ այդ ամենը անի՝ չարաչար կվնասվի (Պողոս Պատրիարք):

74. Հարկավոր է անարժան և անվայել խոսելուց զուսպ լինել, որպեսզի չդատապարտվես ըստ Տիրոջ վճռի. «Քո խոսքերով պիտի արդարանաս և քո խոսքերով պիտի դատապարտվես» (Պողոս Պատրիարք):

75. Չկա ավելի սուրբ լեզու, քան այն, որ գիտի վշտերի մեջ գոհություն հայտնել (Բարսեղ Մաշկևորցի):

76. Ստախոսությամբ բանսարկուի որդիներ չլինենք և բամբասանքներով Արքայությունից չտարագրվենք: Դատարկաբանությամբ մեր բերանները չպղծենք և անմտորեն ծաղրանքի չծառայենք (Սարգիս Շնորհալի):

77. Մինչև ե՞րբ պիտի անմտանանք, ասացեք խնդրեմ. մեր չարիքները բավական չե՞ն մեզ տանջելու համար, որ բամբասանքների վնասներն էլ ենք ավելացնում (Սարգիս Շնորհալի):

78. Եվ ի՞նչ ասենք նրանց մասին, ովքեր դատարկաբանելու և շատախոսելու համար են եկեղեցի հաճախում և, արտասվաթոր պաղատանքների և հաճոյական աղոթքների փոխարեն, որպես թե թատրոնում, կաքավների պես կարկաչում են ու չեն զարհուրում (Խոսրով Անձևացի):

79. Աղաչում ենք, որ ձեր շրթունքներին ու լեզվին դուռ և դռնապան դնեք, որպեսզի միայն օգտակար ու բարի խոսքերին ազատ ելք տան, իսկ չար, վնասակար և անօգուտ խոսքերը սրտի մեջ բանտարկեն՝ թույլ չտալով, որ միտքը չար մանուկներ ծնի, այլ մանավանդ՝ իր սաղմի մեջ պետք է խեղդել սատանայի սերմանածը (Ներսես Շնորհալի):

80. Թող ոչ ոք չբամբասի՝ ասածը ճիշտ լինի, թե՝ սխալ, ուր մնաց՝ դատարկ տեղը: Քանզի ի՞նչ օգուտ կբերես եղբորդ՝ ուրիշների մոտ նրան բամբասելով. քե՛զ վնասեցիր, և նա էլ ոչնչով չօգտվեց: Եթե ուզում ես օգտակար լինել նրան և քեզ, վարվի՛ր տերունական խրատի համաձայն, նրան սիրով հանդիմանի՛ր, ինչպես հիվանդ անդամին՝ սպեղանիով, նախ՝ առանձնաբար, եթե չանսա՝ երկու-երեք վկաների առջև, եթե

նրանցից ևս չպատկառի և չուղղվի, եկեղեցու մե՛ջ ասա, և եթե եկեղեցու մեջ հրապարակորեն նախատվելով էլ չզղջա, այն ժամանակ իրավամբ թող քո կողմից համարվի և հռչակվի իբրև հեթանոս և մաքսավոր (Մաթ.18:15) (Ներսես Շնորհալի):

81. Եվ արդ, թող ոչ ոք չվարժեցնի իր լեզուն զուր չարախոսության կամ ունայն անեծքի, անօգուտ կռիվների և վնասակար վիճաբանությունների մեջ հակառակորդին ընդդիմաբանելուն կամ վիճելիս աշխարհականների պես թշնամալից և անհարգալից խոսքերի բարբառմանը, որ վայել չէ սուրբերին:

...Նույնիսկ այնպիսին, որ գիտե իմաստնությամբ խոսել, շահավետ և օգտակար խոսքերը հաճախակի և անտեղի չպետք է արտաբերի, որպեսզի լսողները ծանձրանալով չնողկան, և բարի խոսքեր ատողները չնախատեն, այլ՝ սակավ, այն էլ՝ հեզությամբ և հանդիմանությամբ (Ներսես Շնորհալի):

82. Աղոթքի վայրում պետք չէ զրուցել, որովհետև սատանային է խոսակից նա, ով զրուցում է: Քանի որ մեր խոսակիցն այստեղ Աստված է, իսկ Նրան թողնել և ուրիշ մեկի հետ զրուցել պատշաճ չէ (Գրիգոր Տաթևացի):

83. Ի՞նչ է դուռը, եթե ոչ՝ քո բերանը, քանզի առաքյալն է ասում. «Դուք Աստծու տաճար եք» (Ա Կոր. 3:16): Եվ քո ներքին մարդը, փակելով դռները, որ քո բերանն է, թող մտնի այս տաճարը և սրբի այն բոլոր պղծություններից (Հակոբ Մծբնեցի):

Հարանց վարքից

1. Հայր Ագաֆոնի մասին ասում են, որ նա երեք տարի բերանում քար էր պահում, մինչև լռել սովորեց (Հարանց վարք):

2. Հայր Սիսոյը մի անգամ իր աշակերտին ասաց. «Հավատա, որ ահա երեսուն տարի է այսպես եմ աղոթում Աստծուն. «Տեր Հիսուս Քրիստոս, պահպանիր ինձ լեզվից», բայց մինչև օրս մեղանչում եմ լեզվով» (Հարանց վարք):

Աղոթք

3. Վանքում մի կրոնավոր այնքան լռակյաց էր, որ տասնվեց տարի ոչ մի մարդ նրա բերանից խոսք չէր լսել: Մի անգամ իր խցում հրդեհ էր բռնկվել և քանի գնում, այնքան ավելի էր սաստկանում: Այդժամ սուրբը տեսնելով, որ մարդկանցից այլևս օգնություն չի սպասվում, դիմում է Աստծուն, աղոթելով մտքում, ապա թույլ տալիս իր լեզվին երկու բառ ասելու.«Հուր, կաց»: Զարմանալի էր, նույն ժամին կրակը դադարեց, ապա ամբողջովին հանգեց (Հայելի վարուց):

4. Սուրբ հայր Պամբոն, որ կարդալ չգիտեր, գնաց, որ մի գրագետից սաղմոս սովորի: Երբ լսեց երեսունիններորդ սաղմոսի առաջին տողը, ուր ասվում է. «Զգուշանամ իմ ճանապարհին, որ լեզվովս չմեղանչեմ», չցանկացավ այլևս լսել և

ասաց. «Եթե գործով սաղմոսի այս տողը կարողանամ կատարել, այդ ինձ բավական կլինի»: Երբ ուսուցանող վարդապետը հանդիմանեց նրան, որովհետև վեց ամիս չէր եկել իր մոտ, սուրբը պատասխանեց. «Դեռ գործս չեմ ավարտել»: Սրանից հետո տարիներ անց ծանոթներից մեկը նորից հարցրեց նրան, թե սովորե՞լ է այն երեսունհիններորդ սաղմոսի սկիզբը: Իսկ սուրբն ասաց. «Երեսունհինը տարում հազիվ կարողանամ գործով սովորել» (Հայելի վարուց):

5. Սուրբ ծերերի մեջ կար մեկը, որին Քրիստոս այնպիսի շնորհ էր տվել, որ Սուրբ Հոգու շնորհիվ տեսնում էր բաներ, որ մյուսները չէին տեսնում:

Մի անգամ, երբ եղբայրներով զրուցում էին հոգևոր բաների շուրջ, այնժամ ծերը տեսնում էր եղբայրների մեջ կանգնած ժպտադեմ սուրբ հրեշտակներին, որոնք հաճույքով ունկնդրում էին խոսակցությունն Աստծո մասին: Երբ խոսակցությունը փոխվում էր ունայն թեմաների շուրջ, հրեշտակները տխրելով հեռանում էին զրուցակիցներից, և նրանց փոխարեն հայտնվում էին գարշելի վայրի բորոտած խոզեր, որոնք դևեր էին: Նրանք ընդունել էին խոզի կերպարանք և զվարճանում էին վանականների շատախոսությամբ և դատարկաբանությամբ:

Այս տեսնելով, երանելի ծերը գնաց իր խուցը և ամբողջ գիշեր արտասվեց:

Նա ցավով արտասվում էր վանականների հոգևոր սայթաքումների համար: Ծերը տեղեկացրեց և ուսուցանեց վանքում ապրող հայրերին ու եղբայրներին՝ ասելով. «Պահպանեք ձեզ շատախոսությունից և ունայն զրույցներից, որից հոգու համար ծնվում են վնասներ և մահ: Մենք չենք հասկանում, որ նման խոսակցությունների միջոցով դառնում ենք ատելի Աստծուն և Իր հրեշտակներին: Շատախոսությունը տկարացնում է մեր հոգին և միտքը ու այնտեղ ստեղծում մեծ դատարկություն» (Հարանց Վարք):

Հեռացրո՛ւ, Տե՛ր, իմ բերանը բամբասելուց և իմ լեզուն՝ չար խոսելուց, իմ ականջները՝ չար լուր լսելուց, ձեռքերս՝ հափշտակելուց և ոտքերս՝ անառակ ճանապարհ գնալուց և բոլոր անդամներս՝ զգաստացրու միշտ կատարելու Քո կամքը:

Տե՛ս, Տե՛ր, իմ տառապանքները և իմ բազմամեղ հոգու ցավերը, դարձի՛ր, ների՛ր և դեպի Քե՛զ առաջնորդիր, ինչպես որ ասացիր. «Դարձե՛ք դեպի Ինձ, և ես կդառնամ դեպի ձեզ»:

Ո՛վ Խորք մեծության և իմաստնության, ընդունի՛ր բռնվածիս, որ մեղքերով ընկել եմ ծովի խորքը, պահպանի՛ր և զորացրո՛ւ ինձ՝ գործելու Քո կամքը, օր ու գիշեր սգալու և լալու իմ ողջ անօրենությունն ու հեղգությունները:

Քավի՛ր ինձ, Տե՛ր, մեղքերից և բամբասանքներից և ներիր իմ անժուժկալության ու ծուլության, որկրամոլության և դատարկաբանության համար, մաքրի՛ր աղտեղության ցանկությունը, հայհոյությունը և բոլոր չար բծերը:

Մեղա՜ Քեզ Տեր, մեղա՜, քանզի խախտեցի Քո պատվիրանները, ելա Կենաց Լույսից և մտա մեղքերի խավարը՝ աղտեղություններ ցանկանալով: Քո սիրուց հեռացա, բռնվեցի չարից և կորստյան որդի եղա. ողորմի՛ր ինձ՝ բազմամեղիս, բարերա՜ր, քանզի միայն Դու ես մարդասեր:

Ուսուցանի՛ր ինձ, Տե՛ր, արդարություն գործել, ճշմարտություն

խոսել, սրբություն սիրել և ատել աղտեղությունը, խոտորվել չարից և գնալ բարու ճանապարհով:

Հագեցրո՛ւ, Տե՛ր, իմ հոգու ծարավը Քո առատաբուխ շնորհով և մի՛ անտեսիր իմ սրտի տոչորումը: Պապակում եմ իմ չարիքների տապից. զովացրո՛ւ և լվա՛ Քո ողորմության ջրով իմ ապականված և հոտած շուրթերը:

Պահի՛ր ինձ, Տե՛ր, խոսքերից և գործերից, տեսումներից և գերիչ խորհուրդներից. և Քո Դատաստանի երկյուղը տպավորի՛ր իմ սրտում՝ անզբաղ հոժարությամբ փութալու և Քո պատվիրանները պահելու համար:

Առաքի՛ր, Տեր, Քո սերովբեներից մեկին, որ, բերելով հրե կայծակը, մերձեցնի իմ շուրթերին և դուրս հանի իմ անօրենությունները, սրբի իմ մեղքերը, մաքրի իմ խորհուրդները, ջնջի իմ աղտեղությունները և լուսավորի իմ միտքը՝ նրանով Հավիտենական Կյանքը ժառանգելու, քանի որ Դու ես իմ օգնականն ու Փրկիչը, և Քեզ վայել է Փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն (Եփրեմ Ասորի):